

**ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ**  
**2005 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԻԶԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ**  
**ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողով

Տնտեսական համագործակցության հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողով

Ֆինանսական և տեխնիկական համագործակցության հայ-գերմանական միջկառավարական հանձնաժողով

Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջկառավարական հանձնաժողով

Առեւտրի, տնտեսության, տեխնոլոգիայի, գիտության, կրթության և մշակույթի բնագավառներում համագործակցության հայ-ինդիական միջկառավարական հանձնաժողով

Առեւտրի, արդյունաբերության, էներգետիկայի, գիտության, տեխնոլոգիաների, գյուղատնտեսության, կրթության և մշակույթի բնագավառներում հայ-չինական միջկառավարական հանձնաժողով

Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության միջև տնտեսական և գիտատեխնիկական հարցերով միջկառավարական հանձնաժողով

Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողով

Հայ-հունական տնտեսական, արդյունաբերական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողով

Առեւտրատնտեսական հարցերով հայ-ղազախական միջկառավարական հանձնաժողով

Հայաստանի Հանրապետության և Լեհաստանի Հանրապետության միջև համագործակցության միջկառավարական հանձնաժողով

Հայ-սիրիական միջկառավարական հանձնաժողով

Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջկառավարական հանձնաժողով

Տնտեսական համագործակցության հարցերով հայ-ուկրաինական միջկառավարական հանձնաժողով

Հայ-ավստրիական միջկառավարական հանձնաժողով

Հայաստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողով

Հայ-դրոզական միջկառավարական հանձնաժողով

Հայաստան-Եվրամիություն համագործակցության կոմիտե

Հայ- լիբանանյան միջկառավարական հանձնաժողով

Հայ- ճապոնական տնտեսական համագործակցության կոմիտե

Հայ-մոլդովական միջկառավարական հանձնաժողով

Հայ-թուրքմենական միջկառավարական հանձնաժողով

Հայ-ռումինական միջկառավարական հանձնաժողով

Հայաստանի Հանրապետության Եւ Բուլղարիայի Հանրապետության միջեւ առեւտրատնտեսական ու գիտատեխնիկական միջկառավարական հանձնաժողով

ՀՀ-ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողով

---

## **Հայաստանի Հանրապետության Եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ տնտեսական Եւ գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողով**

Որպես կանոն, միջկառավարական հանձնաժողովների շարքում ակտիվ գործունեությամբ և համագործակցության ոլորտների բազմազանությամբ աչքի է ընկնում հայ-ռուսական միջկառավարական հանձնաժողովը:

1. ՀՀ և ՌԴ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հայկական մասի անհատական կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի 2000թ. հունիսի 20-ի թիվ 373 որոշմամբ, այնուհետև ՀՀ վարչապետի 2001թ. մարտի 6-ի թիվ 178 և 2003թ. մայիսի 30-ի թիվ 249-Ա որոշումներով կատարվել են փոփոխություններ (հանձնաժողովի հայկական մասի նախագահ՝ ՀՀ պաշտպանության նախարար Ս.Սարգսյան, պատասխանատու քարտուղար՝ ՀՀ կառավարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Ա.Մանասերյան):

2005թ. հունիսի 21-ին Մոսկվայում կայացած հանձնաժողովի համանախագահների հանդիպման արդյունքում ստորագրված արձանագրության 2-րդ կետը նախատեսում էր նշված հանձնաժողովի շրջանակներում ստեղծել ենթահանձնաժողով՝ նպատակ ունենալով ապահովել Հայաստանի Հանրապետության կողմից ՌԴ-ին փոխանցված ձեռնարկությունների արդյունավետ աշխատանքը: Համաձայն արձանագրության նշված կետի, ենթահանձնաժողովի հայկական մասի անհատական կազմը ստեղծվել է դրա անդամների մասին տվյալները ուղարկվել են ռուսական կողմին:

2005թ. հոկտեմբերի 12-13-ը Երևանում տեղի ունեցան ՀՀ և ՌԴ միջև տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հերթական՝ 7-րդ և հանձնաժողովի շրջանակներում ստեղծված ՀՀ կողմից ՌԴ-ին ի սեփականություն հանձնված ձեռնարկությունների արդյունավետ աշխատանքի ապահովման ենթահանձնաժողովի 1-ին նիստերը:

Միջկառավարական հանձնաժողովի շրջանակներում կողմերը քննարկեցին երկկողմ հարաբերությունների իրավապայմանագրային հենքի հետագա զարգացման, փոխադարձ առևտրի, առևտրատնտեսական, ֆինանսական և գույքային հարաբերությունների զարգացման հեռանկարների, տրանսպորտի և կապի, վառելիքաէներգետիկ և հումանիտար ոլորտներում համագործակցության խորացման հարցերը:

Հանձնաժողովը մասնավորապես որոշեց.

ՀՀ և ՌԴ ԱԳՆ-ներին՝ շարունակել տեղեկատվության կանոնավոր փոխանակումը

երկկողմ հարաբերությունների իրավապայմանագրային հենքի հետագա զարգացման հարցերի շուրջ (2005թ մայիսին Երևանում տեղի ունեցան արտգործնախարարությունների միջև խորհրդատվություններ այդ հարցի շուրջ); հաշվի առնելով ՀՀ և ՌԴ միջև փոխադարձ առևտրի վիճակագրական տվյալների պարբերական համադրման անհրաժեշտությունը՝ հանձնարարել Կողմերի մաքսային գերատեսչություններին ընդգրկել տվյալ հարցը ԱՊՀ անդամ-պետությունների փոխադարձ առևտրի մաքսային վիճակագրության տվյալների համադրման 2006թ. ծրագիր-ժամանակացույցի մեջ;

ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի և ՌԴ ֆինանսների նախարարություններին հանձնարարել մինչև 2005թ. նոյեմբերի վերջն ավարտել ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև ՌԴ կողմից ՀՀ-ին տրամադրված պետական վարկերի գծով պարտքի մարման համար ՀՀ պետական սեփականություն հանդիսացող գույքը ՌԴ-ին փոխանցելու վերաբերյալ համաձայնագրի գծով հաշվարկները;

ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի և ՌԴ ֆինանսների նախարարություններին՝ «Վնեշտորգբանկ»-ի հետ համատեղ, մինչև հանձնաժողովի 8-րդ նիստն անցկացնել բանակցություններ նախկին ԽՍՀՄ ներքին արժութային պարտքի մասով պարտավորությունների մարման հարցի կարգավորման վերաբերյալ;

Կողմերի բանկային կառույցներին շարունակել փոխշահավետ համագործակցությունը բանկային և արժութային-ֆինանսական ոլորտներում, այդ թվում՝ ակտիվացնել աշխատանքը միջբանկային ենթակառուցյի ստեղծման և զարգացման ուղղությամբ;

Ռուսական կողմին մինչև 2005թ. դեկտեմբերի 1-ը Հայկական կողմին ներկայացնել ք.Գյումրիում ՌԴ գլխավոր հյուպատոսության տեղակայման պարամետրերը կոնկրետացնող առաջարկություններ, իսկ Հայկական կողմին մինչև 2005թ. քննարկել այդ առաջարկությունները և տեղեկացնել իր որոշման վերաբերյալ՝ հաշվի առնելով, որ դրանից Է կախված ՀՀ և ՌԴ դիվանագիտական ներկայացուցչությունների անշարժ գույքի մասին փաթեթային համաձայնագրի իրավաբանական ձևակերպումը;

Կողմերին ավարտի հասցնել ՀՀ Շիրակի մարզում օբյեկտների շինարարության և վերականգնողական աշխատանքների անցկացման նախագծային և նախահաշվային փաստաթղթերի փաթեթի համաձայնեցումը՝ համաձայնագիրը ստորագրման նախապատրաստելու նպատակով;

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման և ՌԴ տնտեսական զարգացման նախարարություններին ավարտել ՀՀ և ՌԴ միջև մինչև 2010թ. երկարաժամկետ տնտեսական համագործակցության ծրագրի իրականացման միջոցառումների պլանի ճշգրտումը;

ՌԴ ֆինանսների նախարարությանը՝ արագացնել ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև 2002-2006թթ. Հայաստանի Հանրապետություն չմշակված բնական ալմաստների մատակարարումների մասին համաձայնագրի մեջ փոփոխություններ մտցնելու մասին Հայկական կողմի առաջարկության քննարկումը՝ համաձայնագրով մատակարարվող ընդհանուր ծավալի 15% չափով ալմաստի հումքի ոչ արդյունավետ մասի վերարտահանման սահմանափակումների վերացման մասով:

Վառելիքաէներգետիկ համալիրի բնագավառում համագործակցության վերաբերյալ:

Նիստի ընթացքում Էներգետիկայի ոլորտում քննարկված կարևորագույն հարցերից էին գազային ոլորտում երկկողմ համագործակցության, Իրան-Հայաստան գազամուղի շինարարությանը ռուսական կողմի մասնակցության, ինչպես նաև

Հրագրանի ՁԷԿ-ի գործարկման հետ կապված հարցերը: Այդ ուղղությամբ միջկառավարական հանձնաժողովը որոշեց.

- ՀՀ Էներգետիկայի և ՌԴ արդյունաբերության և Էներգետիկայի նախարարություններին 2006թ. առաջին եռամսյակում ստորագրել համաձայնագիր «ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև գազային արդյունաբերության ոլորտում համագործակցության մասին»:

- ՀՀ Էներգետիկայի նախարարությանը և «Գազպրոմ» ԲԲԸ-ին՝ մինչև միջկառավարական հանձնաժողովի համանախագահների հերթական հանդիպումը, ներկայացնել Իրան-Հայաստան գազամուղի շինարարությանը ռուսական ընկերությունների մասնակցության ձևի և պայմանների մասին առաջարկություններ:

Նիստի արձանագրության Էներգետիկայի ոլորտում համագործակցության վերաբերյալ առանցքային հարցերից է Հրագրան ՁԷԿ-ի 5-րդ բլոկի հարցը, որի համաձայն հանձնաժողովը որոշեց՝

- Կողմերը հաստատում են Հրագրանի ՁԷԿ-ի հինգ բլոկների և այլ գույքի, որպես միասնական տեխնոլոգիական համալիրի գործարկման կազմակերպման անհրաժեշտությունը;

- Կողմերին, ելնելով Հրագրանի ՁԷԿ-ի գույքային համալիրի (հինգ բլոկների և այլ ունեցվածքի) տեխնոլոգիական միասնության և Կողմերի տնտեսական շահերի ապահովման անհրաժեշտությունից՝

- որոշել Հրագրանի ՁԷԿ-ի գույքային համալիրի գործարկման կազմակերպմանը համատեղ մասնակցության համաձայնեցված իրավաբանական ձևը՝ հիմնված տվյալ համալիրի տեխնոլոգիական ամբողջականության պահպանման և նրա կառավարման միասնության վրա;

- նախապատրաստել միջկառավարական համաձայնագրի համաձայնեցված նախագիծ, որը սահմանում է որոշման ձևակերպման կարգը և ժամկետները:

Տրանսպորտի և կապի բնագավառում համագործակցության վերաբերյալ.

Կողմերը սերտորեն համագործակցում են տրանսպորտի բնագավառում: Լուրջ խնդիր է Կովկաս-Փոթի երկաթուղալաստանավային հաղորդակցության վերականգնումն ու կանոնավորումը: Ռուսաստանի տրանսնախին և Հայաստանի տրանսկապնախին հանձնարարվել է պայմաններ ստեղծել Կովկաս-Փոթի երկաթուղալաստանավային հաղորդակցության վերականգնման և կանոնավոր գործունեության ապահովման համար՝ լրացուցիչ լաստանավի և այդ ուղով բեռների լրացուցիչ ծավալի ներգրավմամբ:

Ձգձգվող հարցերի թվում է Ռոսավիացիայի կողմից գործունեությունը դադարեցրած ավիաընկերությունների հաշիվների ճշգրտման հարցը: Այդ բնագավառի ֆինանսական խնդիրների կարգավորման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի աշխատանքը համարվել է ավարտված և համապատասխան հանձնարարականներ են տրվել այդ ոլորտում խնդիրներ ունեցող տնտեսվարող սուբյեկտներին աջակցելու վերաբերյալ: Խնդրի լուծմանն օժանդակելու նպատակով որպես լրացուցիչ քայլ համապատասխան գրություն է ուղարկվել ռուսական կողմի նախագահին:

Փաստելով Հայաստանի և Ռուսաստանի միջև կապի և ինֆորմատիզացիայի բնագավառում համագործակցության ակտիվացման զգալի պաշարների առկայությունը, հանձնարարականներ են տրվել նաև այդ խնդրի վերաբերյալ:

Ի կատարումն արձանագրությամբ նշված որոշումների, համաձայնեցվել և ռուսական կողմին է փոխանցվել կապի և ինֆորմացիոն տեխնոլոգիաների բնագավառում համագործակցության մասին միջգերատեսչական համաձայնագրի նախագիծը, պայմանագրեր են ստորագրվում կողմերի հեռարձակող ընկերությունների միջև ռուսական հեռուստահաղորդումների հեռարձակման վերաբերյալ: Մինչ օրս ռուսական կողմից որևէ տեղաշարժ չկա Կովկաս-Փոթի երկաթուղալաստանավային հաղորդակցության կարգավորման և Ռոսավիագիայի կողմից գործունեությունը դադարեցրած ավիաընկերությունների հաշիվների ճշգրտման հարցերում:

Տրանսպորտի ոլորտում հանձնաժողովը որոշեց.

- ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը և ՌԴ տրանսպորտի նախարարությանը պայմաններ ստեղծել Կովկաս-Փոթի նավահանգիստների միջև երկաթուղային-լաստանավային հաղորդակցության վերսկսման և կանոնավոր գործարկման համար՝ տվյալ ուղղությամբ ներգրավելով լրացուցիչ լաստանավ, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել Կովկաս-Փոթի երկաթուղային-լաստանավային անցումով փոխադրման նպատակով բեռների լրացուցիչ ծավալի ներգրավման համար:

Հումանիտար ոլորտում համագործակցության վերաբերյալ:

Չարգացում և առաջընթաց է ապահովվել Հայաստանի և Ռուսաստանի միջև մշակույթի, կրթության և գիտության, հեռուստառադիոհեռարձակման, սպորտի և սեյսմիկ պաշտպանության ոլորտներում: Դրանց հետագա զարգացման հնարավորություններն ու իրականացվելիք գործընթացները, ծրագրերն ու խնդիրները սահմանվել են 7-րդ նիստի արձանագրության մեջ: Այս ոլորտում մեծ իրադարձություն էր Հայաստանում Ռուսաստանի տարվա անցկացումը, որի բացումն ու փակումը կատարվեցին ամենաբարձր մակարդակով, համապատասխանաբար ՌԴ նախագահի և ՌԴ կառավարության ղեկավարի կողմից: Տարվա ընթացքում տեղի ունեցան տասնյակ մշակութային և այլ միջոցառումներ: Մշակվում է 2006 թվականին Ռուսաստանում Հայաստանի տարվա ծրագիրը, որի բացմանը կզուգորդվի 2006թ. հունվարի 21-ին Մոսկվայում կայանալիք համանախագահների հանդիպումը: Ի կատարումն արձանագրությամբ նշված որոշումների, ընդհանուր առմամբ համաձայնեցվել է Ռուսաստանում Հայաստանի տարվա ծրագիրը, որը կբացվի ս.թ. հունվարի 22-ին ՌԴ կատարելիք ՀՀ նախագահի պաշտոնական այցի ընթացքում: Ստեղծվում է սպորտի բնագավառում երկկողմ աշխատանքային կոմիտե, շարունակվում է համագործակցությունը կրթության և սեյսմիկ պաշտպանության բնագավառներում:

Հումանիտար համագործակցության ոլորտում հանձնաժողովը որոշեց.

- ՀՀ և ՌԴ ԱԳՆ-ներին շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ միասին շարունակել Ռուսաստանում Հայաստանի տարվա անցկացման հիմնական միջոցառումների ծրագրի նախապատրաստումը և համաձայնեցումը:

Պայմանագրաիրավական բազայի վիճակի և զարգացման վերաբերյալ:

Կողմերը շարունակել են հայ-ռուսական հարաբերությունների պայմանագրաիրավական բազայի կատարելագործման աշխատանքը: Երկու

երկրների ԱԳՆ փորձագետների 2005թ. մայիսին կայացած խորհրդակցության արդյունքում կազմվել է 1991-2004թթ. միջպետական և միջկառավարական պայմանագրերի ցանկ, նախաձեռնվել է արդիականությունը կորցրած պայմանագրերի գործողությունը դադարեցնելու գործընթաց, նոտաների փոխանակման կարգով փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև ՀՀ քաղաքացիների և ՌԴ քաղաքացիների առանց վիզաների փոխադարձ ուղևորությունների մասին 2000թ. սեպտեմբերի 25-ի Համաձայնագրում, ակտիվորեն ընդլայնվում է ՀՀ և ՌԴ տարածաշրջանների միջև պայմանագրաիրավական բազան:

Չնայած օրենսդրական և այլ կարգի բարդություններին, բավականին առաջընթաց կա միջկառավարական և միջպետական համաձայնագրերի նախագծերի համաձայնեցման գործընթացում:

Համապատասխան գերատեսչություններին հանձնարարվել է ակտիվացնել համաձայնագրերի նախագծերի համաձայնեցման, պայմանագրաիրավական բազայի զարգացման ու կատարելագործման աշխատանքը:

Այս ոլորտում կարևոր նշանակություն ունեցավ ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև կապիտալ ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին 2001թ. սեպտեմբերի 15-ի Համաձայնագրի վավերացումը Հայաստանում և Ռուսաստանում:

Առևտրատնտեսական համագործակցության վերաբերյալ:

Դիտարկվել են 2004-2005թ.թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ և ՌԴ միջև ապրանքաշրջանառության ծավալն ու զարգացումը, դրանց վիճակագրությունը, ներդրումային գործընթացը, ազատ առևտրի մասին համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության նախագծի շուրջ ընթացող բանակցությունների հարցը, Հայաստանում տիեզերական մոնիտորինգի կենտրոն ստեղծելու խնդրի ֆինանսական դժվարությունները, Շիրակի մարզում շինարարական և նախագծանախահաշվային աշխատանքների վերաբերյալ փաստաթղթերի համաձայնեցումը, անասնաբուժության և բուսասանիտարական ոլորտում գյուղնախարարությունների խորհրդատվությունները, նավթամթերքի մատակարարման, բանկային համագործակցության, դիվանագիտական ներկայացուցչություններին փոխադարձ պայմաններով անշարժ գույք տրամադրելու, «ԵրՄՄԳ» արժեթղթերի 100%-ը ռուսական կողմից ձեռք բերելու, երկարաժամկետ տնտեսական համագործակցության միջոցառումները ճշգրտելու, ինչպես նաև 2005թ. չորրորդ եռամսյակում Հայաստանում ՌԴ առևտրային ներկայացուցչություն բացելու հարցերը: Նշված հարցերի լուծման նպատակով համապատասխան հանձնարարություններ են տրվել կողմերի պետությունների համապատասխան գերատեսչություններին:

Կարգավորվել է 2002թ հուլիսի 17-ի միջկառավարական համաձայնագրով ՀՀ ժամկետանց պարտքի խնդիրը, իսկ նախկին ԽՍՀՄ արտարժույթային պարտքի հարցը մնացել է բաց և ներառվել հանձնաժողովի 7-րդ նիստի արձանագրությամբ տրված հանձնարարականների մեջ:

Ի կատարումն արձանագրությամբ նշված որոշումների, դրական տեղաշարժեր են գրանցվել անասնաբուժության և բուսասանիտարական ոլորտում գյուղնախարարությունների խորհրդատվությունների անցկացման, նավթամթերքի մատակարարման, բանկային համագործակցության հարցերում: Դիվանագիտական ներկայացուցչություններին փոխադարձ պայմաններով անշարժ գույք տրամադրելու հարցի շրջանակներում ռուսական կողմը ՀՀ ԱԳՆ է ներկայացրել Գյումրիում

Ռուսաստանի գլխավոր հյուպատոսության շենք կառուցելու չափորոշիչները, որոնք ներկայացվել են ՀՀ կառավարության քննարկմանը: 2007թ. պետական բյուջեում նախատեսվելու նպատակով 2006թ. սկզբին արտակարգ իրավիճակների վարչությունը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն կներկայացնի տիեզերական մոնիտորինգի կենտրոնի ֆինանսական ծրագիրը: Պետական պարտքի մարման դիմաց Ռուսաստանի Դաշնությանն ի սեփականություն հանձնված Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների աշխատանքի վերաբերյալ:

Միջկառավարական հանձնաժողովի շրջանակներում տեղի ունեցավ ՀՀ կողմից ՌԴ-ին ի սեփականություն հանձնված ձեռնարկությունների արդյունավետ աշխատանքի ապահովման ենթահանձնաժողովի 1-ին նիստը: 2005թ. ստեղծված ենթահանձնաժողովի հայկական մասի կազմում ՀՀ ԱԳՆ-ից ընդգրկված է ԱՊՀ վարչության Ռուսաստանի բաժնի վարիչի պաշտոնակատար Մ.Բաբայանը: Ենթահանձնաժողովն ընդունեց այդ ձեռնարկությունների աշխատանքի արդյունավետությանը խոչընդոտող խնդիրների կարգավորման առաջնահերթ միջոցառումների Ծրագիր, որը հաստատվեց միջկառավարական հանձնաժողովի 7-րդ նիստում:

Հանձնաժողովի 7-րդ նիստում ի գիտություն ընդունվեց ենթահանձնաժողովի կատարած աշխատանքը, հավանություն տրվեց ենթահանձնաժողովի մշակած՝ Ռուսաստանի Դաշնությանն ի սեփականություն հանձնված Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների արդյունավետ գործունեությանը խոչընդոտող խնդիրների լուծման առաջնային միջոցառումների պլանին (կցվեց հանձնաժողովի նիստի արձանագրությանը) և հանձնարարվեց պլանի իրականացման ընթացքի մասին զեկուցել 2006թ. հունվարի 21-ին Մոսկվայում կայանալիք համանախագահների հանդիպման ժամանակ:

Ի կատարումն արձանագրությամբ նշված որոշումների, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը տեղեկություն է ներկայացրել պլանի կատարման ընթացքի վերաբերյալ (առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Կ.Սարգսյանը ենթահանձնաժողովի հայկական մասի նախագահն է): Այս հարցին է առնչվում նաև ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև 2002թ. հուլիսի 17-ի համաձայնագրի համապատասխան ՌԴ հանդեպ ՀՀ պարտքի մարման համատեղ ստուգում իրականացրած ՌԴ հաշվիչ պալատի և ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի հաշվետվությունը, ինչպես նաև դրանց համատեղ որոշումների հիման վրա ՀՀ կառավարությանն արված առաջարկությունների քննարկման նպատակով տրված ՀՀ վարչապետի 20.12.2005թ. 080-7452 հանձնարարականը: Պլանի կատարման վերաբերյալ ենթահանձնաժողովի հաշվետվությունը կներկայացվի ս.թ. հունվարի 21-ին Մոսկվայում կայանալիք համանախագահների հանդիպման ընթացքում:

## **Տնտեսական համագործակցության հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողով**

Ավանդաբար ակտիվ է Հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովը: 2005թ. մայիսին հանձնաժողովը Երևանում գումարել է իր հերթական՝ 10-րդ համատեղ նիստը:

Տնտեսական համագործակցության Հայ-ամերիկյան աշխատանքային խումբը (միջկառավարական հանձնաժողովը) ստեղծվել է դեռևս 2000թ.՝ նպատակ ունենալով

զարգացնել համագործակցությունը Հայաստանում տնտեսական բարեփոխումների և ամերիկյան օգնության արդյունավետ օգտագործման բնագավառներում:

Աշխատանքային խմբի համանախագահներն են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարը և ԱՄՆ պետական դեպարտամենտի Եվրոպային և Եվրասիային ԱՄՆ օժանդակության համակարգող դեսպանը:

Աշխատանքային խմբի տարեկան երկու անգամ գումարվող նիստերի արդյունքներն ամրագրվում են «Գործողությունների ծրագրի» տեսքով, ինչը հնարավորություն է ընձեռում սահմանել հստակ միջոցառումներ և հետևել դրանց կատարմանը:

ՀՀ նախարարություններն ու գերատեսչությունները ամերիկյան կողմին իրենց առաջարկությունները ներկայացնում են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համակարգման ներքո:

Քննարկվել են հետևյալ հարցերը.

Հայաստանին ցուցաբերվող ամերիկյան աջակցությունն ու հայ-ամերիկյան համագործակցության ընդհանուր գծերը

Հազարամյակի մարտահրավերների ծրագիր

- Ծրագրի ներկա կարգավիճակը և ՀՀ կառավարության միասնական առաջարկների ներկայացում
- Հազարամյակի մարտահրավերների ծրագրի շրջանակներում 3 առաջնային ոլորտներում և 16 ցուցանիշների գծով առաջընթաց
- Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացում:

Երկարաժամկետ աճի ապահովում Հայաստանում

- ՀՀ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր
- Ֆիսկալ քաղաքականություն
- Աջակցություն ֆինանսական և բանկային ոլորտին:

Ներդրումային / գործարար միջավայր

- ԱԱՀ փոխհատուցման վարչարարություն
- Առևտրին և ԱՀԿ-ին առնչվող հարցեր
- ԱՀԿ-ի պահանջների ապահովում և մաքսային հարցեր
- Մտավոր սեփականության իրավունքներ:

Հայ ժողովրդի համար առաջնային օժանդակության տրամադրում

- Մաքսագերծման հետ կապված խնդիրներ
- ԱՄՆ կառավարության 2005թ. դրամայնացման ծրագրեր
- Հայաստանի դպրոցների փոխկապակցման ծրագրի ընթացքը
- Աջակցություն Հայաստանում գյուղատնտեսական աճին
- Գյուղատնտեսական ոլորտում ամերիկյան աջակցություն
- Ջրային ռեսուրսների կառավարում և ոռոգում:



## Տարածքային կառավարման ծրագրեր

- Տեղական ինքնակառավարման և համայնքային կարողությունների զարգացում
- Էներգետիկա և ենթակառուցվածքներ
- Հայկական ատոմակայան - փակման ընթացքը և աջակցություն
- Հայաստան - Իրան գազատար
- Էներգետիկ ոլորտի ակտիվների սեփականաշնորհում
- Աջակցություն Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:

Ահաբեկչության դեմ պայքարի հնարավորությունների ամրապնդում և անդրսահմանային խնդիրներ

- Իրավապահ ոլորտի բարեփոխումներ
- Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքար
- Փողերի լվացում
- Հակաահաբեկչական համաձայնագրեր

Աջակցություն դատական համակարգին ու քաղաքացիական հասարակությանը

- Դատական համակարգի բարեփոխումներ:

10-րդ նիստի արդյունքում կազմված Գործողությունների ծրագիրը, որն ամրագրում է երկու կողմերի միջև ձեռք բերված պայմանավորվածության արդյունքում կատարման ենթակա միջոցառումները, համաձայնեցվել է ամերիկյան կողմի և հայկական կողմի շահագրգիռ գերատեսչությունների հետ, և 2005թ. հուլիսի 22-ին ստորագրվել է ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարար Վ. Խաչատրյանի և Հայաստանում ԱՄՆ դեսպանի ժամանակավոր պաշտոնակատար Է. Գոդֆրիի կողմից: 2005թ. սեպտեմբերի 26 -ին Վաշինգտոնում տեղի է ունեցել Տնտեսական համագործակցության հայ-ամերիկյան աշխատանքային խմբի 11-րդ նիստը, որի ընթացքում քննարկվել են հետևյալ հարցերը.

Հայաստանին ցուցաբերվող ամերիկյան աջակցության և հայ-ամերիկյան համագործակցության ընդհանուր գծերը

Տնտեսական աճին նպաստող ժողովրդավարական բարեփոխումներ

- ԱՄՆ առաքելության ծրագրերը՝ կապված ազատ և արդար ընտրությունների անցկացման աջակցության հետ
- Հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացում

Հազարամյակի մարտահրավերների ծրագիր

- Ծրագրի ներկա կարգավիճակը և ՀՀ կառավարության միասնական առաջարկների ներկայացում
- Հազարամյակի մարտահրավերների ծրագրի շրջանակներում 3 առաջնային ոլորտներում և 16 ցուցանիշների գծով առաջընթաց:

Տնտեսական քաղաքականություն և երկարաժամկետ աճ

- Ֆիսկալ քաղաքականության բարելավում
- Ֆինանսական և բանկային ոլորտներին աջակցություն
- Աջակցություն հարկային և մաքսային վարչարարության ոլորտում հետագա բարեփոխումներին:

Ներդրումային / գործարար միջավայր

- Օտարերկրյա ներդրումների և ՓՄՁ զարգացման խրախուսում
- ԱԱՀ փոխհատուցման վարչարարություն:

ԱՅԿ-ին և առևտրին առնչվող հարցեր

- ԱՅԿ-ի պահանջների ապահովում և մաքսային հարցեր
- Մտավոր սեփականության իրավունքներ:

Աջակցություն դատական հատվածին

- Դատական հատվածի բարեփոխումներ:

Կրթություն և գիտություն

- Կրթության և գիտության ենթահանձնաժողովի ստեղծում

Ահաբեկչության դեմ պայքարի հնարավորությունները և անդրսահմանային հարցեր

- Իրավապահ ոլորտի բարեփոխումներ
- Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքար
- Փողերի լվացում:

Հայ ժողովրդի համար առաջնային օժանդակության տրամադրում

- ԱՄՆ կառավարության 2006թ. դրամայնացման ծրագրերի կարգավիճակը
- Մաքսագերծման խնդիրներ

Էներգետիկա և ենթակառուցվածքներ

- Հայկական ատոմակայան - փակման ընթացքը
- Էներգետիկ / Էներգահաղորդակցության ոլորտի ակտիվների սեփականաշնորհում:

ԱՄՆ կառավարության շարունակական աջակցությունը գյուղատնտեսության ոլորտին

- Գյուղատնտեսության ոլորտում ամերիկյան աջակցություն
- Ջրային ռեսուրսների կառավարման և ոռոգման հատվածին աջակցություն

11-րդ նիստի արդյունքում կազմված Գործողությունների ծրագիրը կստորագրվի առաջիկայում՝ ամերիկյան կողմի հետ համաձայնեցնելուց հետո:

## **Ֆինանսական և տեխնիկական համագործակցության հայ-գերմանական միջկառավարական հանձնաժողով**

Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև համագործակցության ծրագրերը սկիզբ են առել 1993թ.՝ սկզբում միայն որպես տեխնիկական համագործակցության ծրագրեր: Սակայն 1995թ. սկսած՝ իրականացվում են նաև ֆինանսական համագործակցության ծրագրեր, իսկ 2001թ. միջկառավարական բանակցություններից հետո՝ նաև «Կովկասյան նախաձեռնության» շրջանակներում տարածաշրջանային ծրագրեր: Երկու երկրների միջև տնտեսական համագործակցությունը խթանելու և համակարգելու նպատակով՝ ստեղծվել է միջկառավարական հանձնաժողով, որի հայկական մասի համանախագահն է ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարը: Միջկառավարական բանակցությունները տեղի են ունենում երկու տարին մեկ անգամ, իսկ դրանց միջև ընկած ժամանակահատվածում կազմակերպվում են միջկառավարական խորհրդակցություններ: Առաջին երկկողմանի միջկառավարական խորհրդակցությունները տեղի են ունեցել 1995թ., դրանից հետո՝ յուրաքանչյուր տարի:

Բանակցությունների և խորհրդակցությունների արդյունքներն ամրագրվում են «ՀՀ-ի և ԳԴՀ միջև ֆինանսական և տեխնիկական համագործակցության շուրջ միջկառավարական բանակցությունների /խորհրդակցությունների/ արդյունքների արձանագրության» մեջ, որն ամրագրում է ընթացիկ համագործակցության, ինչպես նաև հաջորդ տարիների համագործակցության վերաբերյալ ձեռք բերված համաձայնությունների մասին դրույթներ:

2005թ. ապրիլի 19-20-ը Բոննում տեղի են ունեցել ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2005-2006թթ. զարգացման ուղղված երկկողմ համագործակցության շուրջ միջկառավարական բանակցությունները, որոնց ժամանակ գերմանական պատվիրակությունը գլխավորում էր ԳԴՀ տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության (BMZ) Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի բաժնի վարիչ ղոկտոր Վոլֆգանգ Արմբրուսթերը, հայկական պատվիրակության ղեկավարն էր ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանը:

Բանակցությունների ընթացքում քննարկվել են ֆինանսական և տեխնիկական համագործակցության 2005-2006թթ. համար նախատեսվող առաջարկներն ու ծրագրերը:

Ֆինանսական համագործակցության շրջանակներում համաձայնեցվել են հետևյալ ծրագրերը (նախատեսվել է ընդհանուր առմամբ 128.07 մլն եվրո)։

1. Հիփոթեքի շուկայի զարգացում -7.5 մլն եվրո, որից 6 մլն եվրո վարկ և 1.5 մլն եվրո դրամաշնորհ:
2. Արմավիրի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագիր -2 մլն եվրո վարկ՝ Արմավիրում կեղտաջրերի մաքրման կայանի կառուցման համար: Գերմանական կողմը համաձայնվել է քննարկել նշված գումարը դրամաշնորհի վերածելու հնարավորությունը:
3. Գերմանահայկական հիմնադրամ - 0.5 մլն եվրո դրամաշնորհ՝ վարկային մասնագետների վերապատրաստման համար:
4. Ուսումնասիրությունների և մասնագետների հիմնադրամ - 0.4 մլն եվրո դրամաշնորհ:

Ներկայումս քննարկվում է 2 առևտրային վարկերի ներգրավման հնարավորությունը.

1. Գերմանահայկական հիմնադրամ ծրագրին՝ մինչև 15 մլն եվրո,
2. Սևան-Յրագոյան կասկադի մաս հանդիսացող Երևան ՅԷԿ-ի վերականգնման համար՝ մինչև 20 մլն եվրո վարկ՝ Միջազգային էներգետիկ կորպորացիա ՓԲԸ-ին:

Տեխնիկական համագործակցության շրջանակներում համաձայնեցվել են հետևյալ ծրագրերը (սախատեսվել է ընդհանուր առմամբ 39.46 մլն եվրո).

1. ՓՄՁ խրախուսման ծրագիր - 1.5 մլն եվրո
2. Համայնքների զարգացման խրախուսման ծրագիր - 1.75 մլն եվրո
3. Իրավական խորհրդատվության ծրագիր - 0.75 մլն եվրո
4. Ուսումնասիրությունների և մասնագետների հիմնադրամ - 1 մլն եվրո:

Համաձայնություն է ձեռք բերվել նաև Կովկասյան Նախաձեռնության շրջանակներում Լոռիքերոյ ՅԷԿ-ի կառուցման համար 12 մլն եվրո վարկի տրամադրման մասին: KfW-ն պատրաստակամություն է հայտնել այս նպատակի համար տրամադրել լրացուցիչ սեփական միջոցներ, ինչպես նաև բանակցել միջազգային այլ ֆինանսական կառույցների հետ՝ ծրագրի ֆինանսավորմանը միջոցներ տրամադրելու վերաբերյալ: Եթե մոտ ապագայում այդ ջանքերն արդյունք չտան, ապա որպես այլընտրանք՝ միջոցները (12 մլն եվրո) կուղղվեն Վերականգնվող էներգետիկայի հիմնադրամին:

Հայկական կողմի խնդրանքով գերմանական կողմը համաձայնվեց խորհրդատվություն տրամադրել անվտանգության քաղաքականությանն առնչվող հարցերով, ֆինանսավորել այդ միջոցառումները Ուսումնասիրությունների և մասնագետների հիմնադրամի (տեխնիկական աջակցություն) միջոցով, ընդ որում 2005թ. ընթացքում Երևանում կազմակերպել քննարկում այդ համագործակցությանն առնչվող հարցերի շուրջ, ինչպես նաև աշխատանքներ տանել պիլոտային միջոցառումներն սկսելու ուղղությամբ:

Կողմերը համաձայնության եկան այն հարցում, որ առողջապահության ոլորտի ծրագրերը կունենան շարունակական բնույթ:

2005թ. ապրիլի 7-ին ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարությունում տեղի է ունեցել հանդիպում KfW-ի պատվիրակության հետ, որի ընթացքում ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի և Հայաստանում ԳԴՀ դեսպան տիկին Փայջի միջև ստորագրվել են.

- «Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև ֆինանսական համագործակցության մասին (Բնապահպանական ծրագիր Հարավային Կովկաս-Հայաստան)» համաձայնագիրը (2.2 մլն եվրո դրամաշնորհ),

- «Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև Կովկասյան Նախաձեռնության շրջանակներում ֆինանսական համագործակցության մասին» (6 մլն եվրո վարկ և 1.5 մլն եվրո դրամաշնորհ) համաձայնագիրը (Վերականգնվող էներգետիկայի ծրագիր):

Ներկայումս աշխատանքներ են տարվում «Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև 2005-2006թթ. ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրի և «Հարավային Կովկասի բնության և կենսաբազմազանության

պահպանության» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում «Հայաստանի Ջավախքի սարահարթում պահպանվող տարածքների ստեղծում» ծրագրի ֆինանսավորման համար (2.2 մլն եվրո դրամաշնորհ) Հատուկ Համաձայնագրի ստորագրման նախապատրաստման կապակցությամբ:

### **Հայաստանի Հանրապետության Եւ Իրանի Իսլամական Հանրապետության միջկառավարական հանձնաժողով**

ԻԻՀ նախագահ Սեյեդ Մոհամմադ Խաթամիի 2004թ. սեպտեմբերի 8-9-ը տեղի ունեցած այցի ընթացքում Երևանում տեղի ունեցավ երկու երկրների տնտեսական համագործակցության համատեղ հանձնաժողովի հիմնադրող նիստը: Նիստը գլխավորում էին հանձնաժողովների համանախագահներ՝ ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Ա. Թումանյանը և ԻԻՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարար Ս. Հոսեյնին:

Ստորագրվել են հետևյալ փաստաթղթերը.

«Փոխըմբռնման հուշագիր Հայ-իրանական կապերի միջկառավարական հանձնաժողովների համատեղ 5-րդ նիստի վերաբերյալ»,  
«Փոխըմբռնման հուշագիր Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի և Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային ծառայության միջև մաքսային գործերում վարչական օգնության վերաբերյալ միջկառավարական համաձայնագրի իրականացման մասին»,  
«Փոխըմբռնման հուշագիր Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության Էներգետիկայի նախարարության միջև համագործակցելու մասին»,  
«Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև մշակութային համագործակցության 2004-2007թթ. ծրագիրը»:

2005թ. հունվարից մինչև սեպտեմբեր կատարված աշխատանքները՝ ըստ նախարարությունների.

#### **ՀՀ Էներգետիկայի նախարարություն**

- Իրան-Հայաստան Էլեկտրահաղորդման 2-րդ գծի շինարարություն և նոր երկշղթա Էլեկտրահաղորդման գծի նախագիծ

2002թ. հուլիսին ՀՀ և ԻԻՀ Էներգետիկայի նախարարների միջև ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր Իրան-Հայաստան Էլեկտրահաղորդման 2-րդ գծի շինարարության իրականացման վերաբերյալ, որի հիման վրա «Հայէներգո» ՓԲԸ, «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ և իրանական «Սանիր» և «Թավանիր» Էլեկտաէներգետիկական ընկերությունների միջև ստորագրվել է ծրագրի իրականացման պայմանագիր:

Գծի երկարությունը 82 կմ է, շինարարության արժեքը՝ շուրջ 8,4 մլն. ԱՄՆ դոլար: Շինուհայր և Ագարակ ենթակայաններում տեղադրվել են մեկական նոր բջիջներ,

ինչպես նաև կապի և ռելեական պաշտպանության բարձր հաճախականության ժամանակակից սարքավորումներ: 2-րդ գծի շինարարության ավարտից հետո Իրանի և Հայաստանի միջև էլեկտրաէներգիայի փոխհոսքերի թողունակությունն ավելացել է 200 ՄՎտ-ով և կազմել է շուրջ 400 ՄՎտ:

2004թ. նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 2-ը տեղի է ունեցել ԻԻՀ Էներգետիկայի նախարար Յ.Բիթարաֆի գլխավորած պատվիրակության այցը Հայաստանի Հանրապետություն: Այցի ընթացքում, ՀՀ վարչապետի մասնակցությամբ, տեղի է ունեցել Իրան-Հայաստան էլեկտրահաղորդման 2-րդ գծի գործարկման հանդիսավոր արարողությունը:

Նույն այցի ընթացքում, ՀՀ և ԻԻՀ միջև էլեկտրաէներգիայի փոխանակման ծավալներն ավելացնելու նպատակով, ՀՀ և ԻԻՀ Էներգետիկայի նախարարները ստորագրել են - Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև նոր երկշղթա էլեկտրահաղորդման գիծ կառուցելու վերաբերյալ ՄՍ Փոխըմբռնման հուշագիր, որով համաձայնություն է ձեռք բերվել Հայաստանի և Իրանի տարածքում կառուցել էլեկտրահաղորդման 3-րդ գիծը՝ շուրջ 400 ՄՎտ թողունակությամբ:

Այդ նպատակով ՀՀ տարածքում պետք է կառուցվի 312 կմ երկարությամբ նոր գիծ (Ագարակ-Հրազդանի ՁԷԿ):

Ծրագրի տեխնիկական առաջադրանքը մշակելու նպատակով, ստեղծվել է համատեղ աշխատանքային խումբ:

2005թ. հունիսի 8-11-ը ՀՀ Էներգետիկայի նախարար Ա. Մովսիսյանի ԻԻՀ կատարած աշխատանքային այցի ընթացքում ՀՀ և ԻԻՀ Էներգետիկայի նախարարությունների միջև ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր, որի համաձայն - SunirՄՍ ընկերությունը կիրականացնի 400 կիլովոլտ երկշղթա երրորդ գծի շինարարության նախագիծը: Վերոհիշյալ ծրագրի ֆինանսավորման նպատակով հայկական կողմը առանձին պայմանագիր կստորագրի Իրանի Արտահանման Չարգացման Բանկի հետ:

2005թ. դեկտեմբերի 5-8-ը Հայաստանի հողմաէլեկտրակայանի պաշտոնական բացման արարողությանը մասնակցելու նպատակով ՀՀ ժամանեց ԻԻՀ Էներգետիկայի նախարար պարոն Փարվիզ Ֆաթթահի գլխավորած պատվիրակությունը: Ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր Էներգետիկ բնագավառի համագործակցության վերաբերյալ:

- Համագործակցություն նավթի և նավթաքիմիայի բնագավառում

2004թ. մայիսի 13-14-ը ԻԻՀ նավթի նախարար Բ. Չանգանեի գլխավորած պատվիրակության Երևան կատարած այցի ընթացքում ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր, համաձայն որի կողմերը համաձայնել են քննարկել Հայաստանի տարածքում նավթավերամշակման գործարանի և դրա համար անհրաժեշտ ենթակառուցվածքների կառուցման խնդիրը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև քննարկել Հայաստանում նավթի և գազի որոնողական աշխատանքներում իրանական կողմի հնարավոր մասնակցության, ինչպես նաև նավթաքիմիական արդյունաբերության բնագավառում հնարավոր համագործակցության խնդիրները:

ԻԻՀ նավթի նախարարության հետ քննարկվում են նաև Իրանից Հայաստան նավթամթերքների ներմուծման հնարավորությունները:

2005թ. հունիսի 8-11-ը ՀՀ Էներգետիկայի նախարար Ա. Մովսիսյանի ԻԻՀ կատարած աշխատանքային այցի ընթացքում ԻԻՀ նավթի նախարար Բ. Չանգանեի և ԻԻՀ

Նավթաքիմիական արդյունաբերության պատասխանատուների հետ քննարկվել են Իրանից «Նաիրիտ» գործարանի արտադրության համար անհրաժեշտ հումքատեսակների ներմուծման, ինչպես նաև «Նաիրիտի» առանձին արտադրատեսակների արտահանման խնդիրները: Դրա հետ կապված, ս.թ. օգոստոսի 25-29-ը Հայաստանի Հանրապետություն է այցելել Թավրիզի նավթաքիմիական գործարանի պատվիրակությունը: Այցի ընթացքում «Նաիրիտի» և Թավրիզի նավթաքիմիական գործարանի միջև ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր՝ հետագա համագործակցության վերաբերյալ:

- Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի շինարարություն

2005թ. հունիսի 8-11-ը ՀՀ էներգետիկայի նախարար Ա. Մովսիսյանի ԻԻՀ կատարած աշխատանքային այցի ընթացքում ՀՀ և ԻԻՀ էներգետիկայի նախարարությունների միջև ստորագրված Փոխըմբռնման հուշագրի համաձայն, - ՄարոսՆ ընկերությունը կիրականացնի Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ բլոկի շինարարության ավարտի ծրագիրը՝ ավելացնելով մեկ միավոր գազատուրբինային կայան: Վերոհիշյալ ծրագրի ֆինանսավորման նպատակով, հայկական կողմն առանձին պայմանագիր կստորագրի Իրանի Արտահանման Չարգացման Բանկի հետ:

ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարություն

3-2. Բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների տրանսպորտային խնդիրները դյուրացնելու նպատակով պայմանավորվածություն էր ձեռք բերվել երկու երկրների փոխադրումների համար ստեղծել հավասար պայմաններ: Որոշվել էր երկու ամիսը մեկ անգամ կազմակերպել փորձագիտական խմբերի հանդիպումներ երկու երկրների յուրաքանչյուր սահմանակետում, ելնելով գործնական համադրումներ իրականացնելու անհրաժեշտությունից:

Երկկողմ և տարանցիկ բեռնափոխադրումների իրականացման պայմանները կանոնակարգվում են ՀՀ և ԻԻՀ կառավարությունների միջև «Միջազգային տրանսպորտային փոխադրումների մասին» համաձայնագրով (06.10.1992թ.), որի 4-րդ հոդվածի բ/ կետի համաձայն «Պայմանավորվող կողմի փոխադրողին կթույլատրվի ժամանակավորապես դատարկ կամ բեռնված թափքով մուտք գործել պայմանավորվող մյուս կողմի երկիր, եթե պայմանավորվող կողմերից մեկի երկրով տարանցիկ փոխադրումներ են կատարվում երրորդ երկիր»:

Փորձագիտական խմբերի վերջին հանդիպումը կայացել է երեք ամիս առաջ:

3.4 Ելնելով Հյուսիս-Հարավ և ՏՐԱՍԵԿԱ միջանցքներում արդյունավետ գործողությունների իրողությունից, ինչպես նաև տարածաշրջանում նշված երկու միջանցքների զարգացմանը միտված երկու երկրների աջակցությունից, նպատակ ունենալով փոխադարձաբար նվազեցնել տրանզիտի ծախսերը, կողմերը համաձայնվեցին սույն Փոխըմբռնման հուշագրի ստորագրումից հետո մեկ ամսվա ընթացքում ուսումնասիրել և հայտնել իրենց տեսակետները վարորդների համար վիզային ռեժիմի վերացման պայմանների մասին:

Կարևորելով երկաթուղային տրանսպորտի ոլորտում այլ երկրների փորձի ներդրումը, հայկական կողմն իր պատրաստակամությունն է հայտնել մասնակցելու կազմակերպվող ուսուցողական և մասնագիտական դասընթացներին:

Դասընթացների ցանկը տրամադրվել է: Հայկական երկաթուղում քննարկվել է դրանց մասնակցելու առաջարկությունը: Ընտրված դասընթացներին մասնակցելու վերաբերյալ հայտնվել է ԻԻՀ դեսպանությանը: Իրանական կողմից պատասխան դեռևս չի ստացվել:

2005թ. մայիսի 2-4-ը ԻԻՀ է մեկնել «Հայկական երկաթուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ա. Խրիմյանի գլխավորած պատվիրակությունը՝ ԻԻՀ Բաֆդ-Մաշհադ երկաթգծի բացման պաշտոնական արարողությանը մասնակցելու նպատակով:

## Առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն

1-2. Առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման և ակտիվացման նպատակով, առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունում տեղի են ունեցել հանդիպումներ Իրանի Իսլամական Հանրապետության Արդաբիլի նահանգապետի գլխավորած պատվիրակության հետ: Հանդիպման ընթացքում երկուստեք հակիրճ ներկայացվել են առաջարկվող երկկողմ համագործակցության ուղղությունները՝ մասնավորապես, շինանյութերի արտադրության, հանքարդյունաբերության, տեքստիլ արդյունաբերության, առևտրի, սննդի վերամշակման, փայտանյութի վերամշակման, մսամթերքի արտադրության, երկշերտ խողովակների արտադրության, գյուղատնտեսության, զբոսաշրջության ոլորտները: Նշված ոլորտներում հիմնականում կարևորվել է համագործակցությունը մասնավոր հատվածի ներգրավմամբ՝ պետական աջակցության ներքո: Կարևորվել է Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի հովանու ներքո Արդաբիլի նահանգ պատվիրակություն գործուղելու հարցը, նախատեսելով, որ վերջինիս կազմում կընդգրկվեն նաև գործարարներ վերոնշյալ ոլորտներից: Նշվածի վերաբերյալ 15.12.04թ N 05-12/8-1017 գրությամբ տեղեկացվել է Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատին, սակայն պատասխան դեռևս չի ստացվել:

Ելնելով ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև փոխշահավետ առևտրատնտեսական համագործակցության ընդլայնման և երկու երկրների միջև

ապրանքաշրջանառության ծավալների ավելացման անհրաժեշտությունից, նախարարությունը ՀՀ ԱԳՆ ուղղված 16.09.04թ N02-12/ 7 - 535 գրությամբ խնդրել էր Իրանական կողմի հետ քննարկել Քիշ ազատ տնտեսական գոտում հայկական կազմակերպությունների գործունեություն ծավալելու հնարավորությունները՝ մասնավորապես, նշված վայրում հայկական կողմի համար տարածքի ձեռք բերման և հայկական ապրանքների ցուցահանդես - վաճառքի կազմակերպման ուղղությամբ, ինչպես նաև այդ նպատակով նախատեսվող ապրանքների՝ մինչև Քիշ առանց մաքսատուրքերի տարանցիկ տեղափոխման նպատակով Իրանի կառավարության կողմից համապատասխան թույլտվություն ստանալու համար: Իրանական կողմը ողջունել էր հայկական կողմի առաջարկը և պատրաստակամություն էր հայտնել ընդունելու հայկական պատվիրակությանը ս/թ փետրվարի 28-ից մարտի 4-ը:

Սակայն գրության ուշացման պատճառով, ինչպես նաև այցի հետ կապված նախապատրաստական աշխատանքներն իրականացնելու համար

նախարարությունը խնդրեց այցի կազմակերպման ժամկետները հետաձգել:

Գրության ուշացման, ինչպես նաև պատվիրակության կազմում ընդգրկվող անձանց աշխատանքային խիստ ծանրաբեռնվածության պատճառով, նախարարությունը կրկին ԱԳՆ-ի միջոցով (05.06.05N 05-12/8-482) խնդրեց այցը հետաձգել ս/թ նոյեմբերին, միաժամանակ խնդրելով այցի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել առնվազն 2 ամիս առաջ: Մինչ օրս Իրանական կողմից հարցի վերաբերյալ առաջարկ չի ստացվել:

Նախարարությունում տեղի է ունեցել հանդիպում Մազանդարանի նահանգապետի



տեղակալի հետ: Այցը հիմնականում ուներ ճանաչողական բնույթ: Հանդիպման ընթացքում քննարկվել են առևտրատնտեսական համագործակցությանն առնչվող հարցեր:

Մագանդարանի նահանգապետարանի հրավերով, ս/թ մայիսի 15-20-ը տեղի ունեցավ հայկական պատվիրակության այց՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալի գլխավորությամբ: Այցի ընթացքում ստորագրվեց Փոխըմբռնման հուշագիր, որտեղ ամրագրվեց դրույթ զբոսաշրջության և ցուցահանդեսային ոլորտներում համագործակցության վերաբերյալ:

2005թ. մայիսի 30-ից հունիսի 2-ը, ՀՀ-ում ԻԻՀ դեսպանության նախաձեռնությամբ, Թավրիզում կայացավ երկու երկրների առաջին գործարար համաժողովը, որին հայկական կողմից մասնակցում են թվով 60-70 գործարարներ:

1-4 . Իրանական և հայկական կողմերը պարբերաբար միմյանց են տրամադրել տեղեկատվություն ցուցահանդեսների և տոնավաճառների, ինչպես նաև սեմինարների և համաժողովների կազմակերպման վերաբերյալ:

1-6. Ելնելով երկու երկրների միջև առևտրատնտեսական բնագավառում հարաբերությունների զարգացման, ինչպես նաև ապրանքաշրջանառության ծավալների ավելացման անհրաժեշտությունից, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իրանի արտաքին առևտրի նեժիմը ենթադրում էր ներմուծման զգալիորեն բարձր դրույքաչափեր և ոչ տարիֆային կարգավորման միջոցներ, նախարարությունը ձեռնամուխ եղավ ստորագրելու «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև ազատ առևտրի մասին» Համաձայնագիր: Մինչ այդ իրանական կողմը, առևտրական համագործակցությունն ակտիվացնելու նպատակով պատրաստակամություն էր հայտնել բանակցություններ վարել առևտրային սակագների դրույքաչափերի փոխադարձ իջեցման ուղղությամբ, որը որպես դրույթ ամրագրվել էր վերոհիշյալ Փոխըմբռնման հուշագրում: Իրանական կողմը քննարկման նպատակով, հայկական կողմին փոխանցել էր «Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև արտոնյալ առևտրի մասին» համաձայնագրի նախագիծը: Սակայն նախարարությունը, քննարկելով այն, նպատակահարմար համարեց համաձայնեցման հետագա գործընթացը շարունակել հայկական կողմից մշակված տարբերակի շրջանակում՝ առաջարկելով «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրի նախագիծ:

Նախարարության կարծիքով նշված համաձայնագրի կնքումը Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև սահմանելով ազատ ռեժիմ՝ նպաստավոր պայմաններ կստեղծի կողմերի միջև փոխշահավետ համագործակցության և տնտեսական կապերի զարգացման, ինչպես նաև երկու երկրների տնտեսվարող սուբյեկտների միջև համագործակցության ընդլայնման և խորացման համար:

Հարկ է նշել, որ նշյալ համաձայնագրի նախագիծն անցել է ներպետական համաձայնեցման գործընթացը և 2005թ. մարտին ուղարկվել է արտաքին գործերի նախարարություն՝ այն սահմանված կարգով իրանական կողմին ուղարկելու համար /փաստաթուղթը նախատեսվում է քննարկել և նախաստորագրել հունվարի 29-31-ը կայանալիք 6-րդ նիստի ընթացքում/:

Գյուղատնտեսության նախարարություն

Առևտրատնտեսական հարցերով հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի վերջին համատեղ նիստից հետո ընկած ժամանակահատվածում երկկողմ համագործակցությունը գյուղատնտեսության բնագավառում շարունակել է զարգանալ: Մասնավորապես, ընդլայնվել է համագործակցության աշխարհագրությունը և կապեր են հաստատվել ԻԻՀ մի շարք նահանգների հետ: 2004թ-ին կայացել են ՀՀ գյուղատնտեսության նախարար Դ. Լոքյանի և ԻԻՀ Արդաբիլի նահանգապետ Նեգարանդեի փոխայցելությունները, որոնց ընթացքում ստորագրված Փոխըմբռնման հուշագրերով նախատեսվում է համագործակցություն գյուղատնտեսության գրեթե բոլոր ուղղություններով: Այս տարվա նոյեմբեր ամսին Արդաբիլի նահանգում հատկացված 2 հեկտար տարածքի վրա ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը կիրականացնի հայկական ծիրանենու տնկումներ: Իրանական կողմը աշխատանքներ է իրականացնում Հայաստանում կարտոֆիլի վերամշակման գործարան հիմնելու ուղղությամբ: 2005թ. տարեսկզբին Հայաստան է ժամանել ԻԻՀ Մազանդարանի փոխնահանգապետ պրն. Միրլոհիի գլխավորած պատվիրակությունը՝ երկկողմ համագործակցության շուրջ բանակցություններ վարելու նպատակով: Պատվիրակությունն այցելել է գյուղատնտեսական ֆերմերային տնտեսություններ, հանդիպումներ է ունեցել գործարարների հետ: Այցի արդյունքներով ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր, որը նպատակ ունի զարգացնել համագործակցությունը գյուղատնտեսության բնագավառում այդ նահանգի հետ: 2005թ. մայիսին կայացել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ Ս. Ավետիսյանի գլխավորած պատվիրակության այցը ԻԻՀ Մազանդարանի նահանգ: Ծանոթանալով Մազանդարանի նահանգի արտադրական կարողություններին և առկա ներուժին, կողմերը հնարավոր են համարել համագործակցել պտղաբուծության, անասնաբուծության, ձկնաբուծության, ագրոտուրիզմի բնագավառներում: Հանդիպումների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն, 2005թ. հոկտեմբեր-նոյեմբեր ընկած ժամանակահատվածում Հայաստանում կկազմակերպվի Մազանդարանում թողարկվող ապրանքների ցուցահանդես: Նախապատրաստական աշխատանքներն արդեն իրականացվել են, այս գործընթացին ներգրավվել է նաև ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը և այս պահին ճշգրտվում են ցուցահանդեսի անցկացման վերջին մանրամասները: Հաշվետու ժամանակահատվածում կայացել են նաև փորձագետների փոխայցելություններ: ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացուցիչների մի մեծ խումբ մասնակցել է ս.թ. մայիսին Թավրիզում կազմակերպված բիզնես-ֆորումի աշխատանքներին, որոնց արդյունքում ուղղակի կապեր են հաստատվել հայ և իրանցի արտադրողների միջև՝ հատկապես թռչնաբուծության, կերարտադրության, ձկնաբուծության ոլորտներում: Երկու երկրների կառավարությունների միջև «Բույսերի պաշտպանության և ֆիտոսանիտարական կարանտինի մասին» կոնվենցիայի ստորագրման կապակցությամբ, նախարարությունը նախագիծ է ներկայացրել ՀՀ ԱԳՆ՝ իրանական կողմին փոխանցելու նպատակով, բայց դեռևս չի ստացել իրանական կողմի տեսակետը / փաստաթուղթը նախատեսվում է ստորագրել հունվարի 29-31-ը կայանալիք 6-րդ նիստի ընթացքում/:

Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն

Նկատի ունենալով երկու պետությունների հետաքրքրությունը միմյանց մշակութային արժեքների, ավանդական մշակութային կապերի հետագա զարգացման և

պահպանման գործում և հաշվի առնելով 1994թ. նոյեմբերի 27-ին թեհրանում ստորագրված « Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև մշակույթի, գիտության, կրթության, սպորտի, զբոսաշրջության և զանգվածային լրատվության միջոցների բնագավառներում համագործակցության» Համաձայնագիրը, ՀՀ-ում և ԻԻՀ-ում կրթամշակութային կենտրոններ հիմնելու վերաբերյալ բանակցությունների արդյունքում, ԱԳՆ պատրաստել և կառավարությանն է ներկայացրել՝ երկու երկրների մայրաքաղաքներում կրթամշակութային կենտրոններ հիմնելու մասին միջպետական պայմանագրի նախագիծ: Իրանական կողմն այդ նպատակով Հայաստանում ունի սահմանված հողատարածք, ակնկալվում է համարժեք տարածք ձեռք բերել Իրանում:

Մշակույթի բնագավառի տարբեր ստեղծագործական խմբեր և անհատ կատարողներ մասնակցել են երկու երկրներում կազմակերպվող մշակութային միջոցառումներին և միջազգային փառատոներին, մասնավորապես՝

- Երևանի ժողովրդեստի թանգարանում կազմակերպվել է իրանցի նկարիչների ցուցահանդես՝ նվիրված Իրանի Իսլամական հեղափոխության 26-րդ տարեդարձին,
- Հայաստանում անցկացվել է «Հայաստան-Իրան մշակութային կամուրջներ» համաժողովը,
- «Ոսկե ծիրան» փառատոնին մասնակցել է ճանաչված իրանցի ռեժիսոր Զիառուսթամը, որի ֆիլմերը ցուցադրվել են փառատոնում,
- Ս.թ. սեպտեմբերի 13-ին ԱՕԶՍ-ում կազմակերպվել է Ֆերեշթե Ազարբանիի «Մանրանկարչություն և զարդարվեստ» ցուցահանդեսը,
- 2005թ. դեկտեմբերի 7-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի կլոր դահլիճում տեղի ունեցավ Պարսից լեզվի և գրականության բարեկամների «Փարսիան» հասարակական կազմակերպության պաշտոնական բացումը:

#### Կրթության և գիտության նախարարություն

Իրանի Իսլամական Հանրապետության գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարար դոկտոր Ջաֆար Թոֆիդիի հրավերով ,2005թ. հունվարի 15-19-ը, երկու երկրների միջև կրթական, հետազոտական և տեխնոլոգիական համագործակցության ընդլայնման շուրջ կարծիքներ փոխանակելու և նոր ուղիների մշակման նպատակով ԻԻՀ է մեկնել ՀՀ կրթության և գիտության նախարար Ս. Երիցյանի գլխավորած պատվիրակությունը: Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել Երևանի պետական համալսարանի, Երևանի ճարտարապետաշինարարական պետական համալսարանի, Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի և իրանական մի շարք համալսարանների միջև ուղղակի համագործակցության վերաբերյալ:

Պաշտոնական այցից հետո պատասխան այցի հրավերներ են հղվել ԻԻՀ գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարար դոկտոր Ջաֆար Թոֆիդիին և ԻԻՀ կրթության և դաստիարակության նախարար Մորթեզա Հաջիին իրենց հարմար ժամկետներում տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետություն այցելելու նպատակով:

ՀՀ պատվիրակության Իրան կատարած պաշտոնական այցի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների, առկա խնդիրները լուծելու և համագործակցությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով, ստեղծվել է

հայկական աշխատանքային խումբ: Խմբի հայկական կազմի մասին տեղեկացվել է իրանական կողմին և հրավերը է ուղարկվել իրանական կողմի աշխատանքային խմբի ձևավորումից հետո, կրթական համակարգի ուսումնասիրման և փորձի փոխանակման նպատակով, գործուղել Հայաստանի Հանրապետություն : Ի պատասխան ՀՀ կրթության և գիտության նախարարի հրավերի ս.թ. հունիսի 13-16-ը Հայաստանի Հանրապետություն է ժամանել ԻԻՀ կրթության և դաստիարակության նախարար Մորթեզա Հաջիի գլխավորած պատվիրակությունը : Ս.թ. հունիսի 16-ին ստորագրվել և ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության կրթության և դաստիարակության նախարարության միջև կրթական համագործակցության մասին 2005-2008 թվականների համար» Փոխըմբռնման հուշագիրը :

ԻԻՀ Շիրազի համալսարանի հետ համագործակցելու համար կապեր են ստեղծվել Հայ-ռուսական (սլավոնական) պետական համալսարանի և Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի միջև: 2005թ. մարտի 15-ին Հայ-ռուսական /սլավոնական/ պետական համալսարանում բացվել է իրանագիտության կենտրոնը:

ԻԻՀ Խաջե Նասիրեդին Թունիսիի անվան արդյունաբերական համալսարանի և Երևանի ճարտարապետաշինարարական պետական համալսարանի միջև ուղիղ կապեր հաստատելու նպատակով իրանական կողմին է ներկայացվել համագործակցության պայմանագրի նախագիծ: Պայմանագրի շրջանակներում երկու համալսարանների ներկայացուցիչների հանդիպումների ընթացքում կմշակվեն գործնական ծրագրեր:

#### Առողջապահության նախարարություն

2005թ. ապրիլի 18-ին Թեհրանից Հայաստան է ժամանել Իրանի Իսլամական Հանրապետության առողջապահության, բուժման և բժշկական կրթության նախարարության պատվիրակությունը՝ փոխնախարար Մոհամմադ Նուրիի գլխավորությամբ: Այցի ընթացքում պատվիրակության անդամները ցանկություն են հայտնել խորացնել համագործակցությունը՝ դեղերի, վակցինաների և բժշկական սարքավորումների արտադրության, բժշկական կրթության, սրտանոթային հիվանդությունների, չբերության բուժումների և օրգանների պատվաստման ոլորտում:

2005թ. մայիսի 25-26-ը «IRAN MED» բժշկական և դեղագործական տեխնոլոգիաների միջազգային ինստիտուտի ցուցահանդեսին մասնակցելու նպատակով, ԻԻՀ մեկնեց ՀՀ առողջապահության փոխնախարար պարոն Թ. Հակոբյանի գլխավորած պատվիրակությունը:

Փոխնախարար Թ. Հակոբյանի Իրան կատարած պաշտոնական այցի ընթացքում Իրանի Իսլամական Հանրապետության առողջապահության, բուժման և բժշկական կրթության և ՀՀ առողջապահության նախարարությունների միջև ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր:

Բավականին ակտիվ են շփումները ԻԻՀ-ի տարբեր մակարդակների կառույցների /ԻԻՀ առողջապահության նախարարություն, Արևելյան Ատրպատական նահանգի ղեկավարություն, ԻԻՀ «Կարմիր Մահիկ» ընկերություն և այլն/ հետ: Բազմիցս հանդիպումներ են իրականացվել Հայաստանում ԻԻՀ դեսպանատան ներկայացուցիչների հետ:

Ներկայումս համագործակցության շրջանակներում պարբերաբար իրականացվում է տեղեկատվության փոխանակում երկու երկրներում հիգիենիկ-հակահամաճարակային վիճակների մասին և նախատեսվում է իրականացնել բժշկական հաստատությունների քույրացման ծրագրեր:

Բնապահպանության նախարարություն

2001թ. դեկտեմբերի 27-ին վավերացվել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության բնապահպանական կազմակերպության միջև համագործակցության մասին Փոխըմբռնման հուշագիրը:

ՀՀ բնապահպանության նախարարի 01.04. 2002թ. թիվ 42 հրամանով ստեղծվել և 21.03.2003թ. թիվ 86-Ն հրամանով հաստատվել է՝ հանձնաժողով ՀՀ բնապահպանության նախարարության և ԻՀՀ բնապահպանական կազմակերպության միջև համագործակցության Փոխըմբռնման հուշագրի դրույթները իրագործման նպատակով:

Պարբերաբար ՀՀ բնապահպանության նախարարությունը սահմանված կարգով, Փոխըմբռնման հուշագրի դրույթների իրագործման շրջանակներում, ՀՀ ԱԳՆ է ներկայացրել առաջարկություններ Հայաստանի և Իրանի բնապահպանության ոլորտի պաշտոնյաների հանդիպման համար պատվիրակության կազմը և օրակարգը ձևավորելու, քննարկման թեմաների վերաբերյալ, երկկողմանի հանդիպումը նախապատրաստելու համար: Մինչ այժմ հանդիպումը չի կայացել:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

2005թ. հունվարի 22-26-ը ԻՀՀ է մեկնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Վարդանյանի գլխավորած պատվիրակությունը: Քննարկվել են աշխատանքի և սոցիալական հարցերի ոլորտներում երկու երկրների միջև համագործակցություն ծավալելու վերաբերյալ հարցեր: Ստորագրվել է համագործակցության վերաբերյալ Փոխըմբռնման հուշագիր:

ՄԻՋՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

2005 թվականի ընթացքում (հունվար-օգոստոս) ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից Իրանի Իսլամական Հանրապետության հետ համագործակցության շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

2005 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ԻՀՀ հետ ՀՀ Սյունիքի մարզպետարանը համագործակցել է ԻՀՀ Արևելյան Ատրպատականի նահանգապետարանի հետ:

ԻՀՀ Արևելյան Ատրպատականի նահանգապետի հրավերով Սյունիքի մարզպետի գլխավորած պատվիրակության Արևելյան Ատրպատականի նահանգ (ք. Թավրիզ) կատարած այցի արդյունքում Սյունիքի մարզպետարանի կողմից կազմվել է հանդիպման արդյունքներն ամփոփող Փոխըմբռնման հուշագրի նախագիծը, որը ՀՀ ԱԳՆ-ի միջոցով ներկայացվել է իրանական կողմի համաձայնեցմանը: Իրանական

կողմից ստացվել է պատասխան գրություն՝ նոր առաջարկներով: Սակայն հուշագիրն այդպես էլ չստորագրվեց, ինչը պայմանավորված էր ԻԻՀ Արևելյան Ատրպատականի նահանգի և ՀՀ Սյունիքի մարզի միջև 2005 թվականի սկզբներին Կապան քաղաքում սահմանային համատեղ հանձնաժողովի անդրանիկ նիստ գումարելու վերաբերյալ պայմանավորվածության առկայությամբ:

ՀՀ Սյունիքի մարզի և ԻԻՀ Արևելյան Ատրպատականի նահանգի սահմանային համատեղ հանձնաժողովի առաջին նիստն անցկացվեց 2005 թվականի հունիսի 29-ին՝ Կապան քաղաքում: Կապանում պատվիրակությունների հանդիպման ընթացքում առանձին քննարկվեցին նաև ՀՀ Սյունիքի մարզի և ԻԻՀ Արևելյան Ատրպատականի նահանգի միջև փոխշահավետ համագործակցության ապահովմանն ուղղված հարցեր: Արդյունքում՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից կազմվեց և ՀՀ ԱԳՆ ներկայացվեց երկու փաստաթուղթ:

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի և Իրանի Իսլամական Հանրապետության Արևելյան Ատրպատականի նահանգի սահմանային համատեղ հանձնաժողովի առաջին նիստի արձանագրության նախագիծը,
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի և Իրանի Իսլամական Հանրապետության Արևելյան Ատրպատականի նահանգի միջև Փոխըմբռնման հուշագրի նախագիծը:

Միաժամանակ, ԻԻՀ Արևելյան Ատրպատականի նահանգի ղեկավարության խնդրանքով (ՀՀ ԱԳՆ-ի միջոցով փոխանցված) Սյունիքի մարզպետարանի կողմից, իրանական կողմին փոխանցելու նպատակով, ՀՀ ԱԳՆ ներկայացվեցին տվյալներ կողմերի փոխհամաձայնությամբ նախատեսված պարբերական հանդիպումներին մասնակցելու համար հայկական կողմի պատվիրակության կազմի, իրանական կողմի փորձագետների կողմից Սյունիքի մարզում ցորենի ցանքատարածությունների համապատասխան ուսումնասիրություններ կատարելու նպատակով առաջարկվող հողատարածքների և Սյունիքի մարզում արտադրվող «Ակներ» խմելու ջրի որակական հատկանիշների վերաբերյալ:

2005թ. հունիսին Կապանում սահմանային համատեղ հանձնաժողովի նիստի անցկացման կապակցությամբ ԻԻՀ Արևելյան Ատրպատականի նահանգապետի տեղակալի կողմից Սյունիքի մարզպետին է ուղարկվել շնորհակալական նամակ:

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

2005թ. հունիսի 4-7-ը ՀՀ Արարատի մարզպետի հրավերով ՀՀ ժամանեց ԻԻՀ Հորմոզգանի նահանգապետ պարոն Էբրահիմ Դերազգիսուի գլխավորած պատվիրակությունը: Այցի ընթացքում պարոն Դերազգիսուն հանդիպումներ է ունեցել ՀՀ նախագահի, ՀՀ վարչապետի, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար, հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի նախագահի, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի, Արարատի մարզպետի և ՀՀ ԱԳ փոխնախարարի հետ: Հունիսի 5-ին Արարատի մարզպետարանում, մարզպետ Ա. Սարգսյանի և նահանգապետ Է. Դերազգիսուի կողմից ստորագրվել է « Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի և Իրանի Իսլամական Հանրապետության Հորմոզգանի նահանգի միջև համագործակցության մասին » Փոխըմբռնման հուշագիրը:

**Առեւտրի, տնտեսության, տեխնոլոգիայի, գիտության, կրթության եւ մշակույթի բնագավառներում համագործակցության հայ-հնդկական միջկառավարական հանձնաժողով**

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովի նիստեր չեն գումարվել:

**Առեւտրի, արդյունաբերության, էներգետիկայի, գիտության, տեխնոլոգիաների, գյուղատնտեսության, կրթության եւ մշակույթի բնագավառներում հայ-չինական միջկառավարական հանձնաժողով**

2005 թ. սեպտեմբերի 26-ից 27-ը ՉԺՀ մայրաքաղաք Պեկինում ընթացան Առեւտրի, արդյունաբերության, էներգետիկայի, գիտության, տեխնոլոգիաների, գյուղատնտեսության, կրթության և մշակույթի բնագավառներում համագործակցության հայ-չինական միջկառավարական հանձնաժողովի չորրորդ նիստի աշխատանքները:

Հայկական պատվիրակությունը գլխավորում էր ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար, հայ-չինական առևտրատնտեսական միջկառավարական հանձնաժողովի հայկական մասի նախագահ Արտաշես Թումանյանը:

Չինական կողմը գլխավորում էր հանձնաժողովի չինական մասի նախագահ, ՉԺՀ առևտրի նախարարության Եվրոպայի երկրների վարչության գլխավոր տնօրեն Սյույ Թունկայը:

Սեպտեմբերի 26-ին, հանձնաժողովի լիազումար նիստի բացումից առաջ, տեղի ունեցավ ՉԺՀ առևտրի նախարարի օգնական /տեղակալի կարգավիճակով/ Ֆու Տզինի հետ ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար, հայ-չինական միջկառավարական առևտրատնտեսական հանձնաժողովի նախագահ Ա. Թումանյանի հանդիպումը, որին մասնակցում էին հանձնաժողովի հայկական և չինական մասերի անդամները: Կողմերը միմյանց ներկայացրին տնտեսական բարեփոխումների ընթացքը Հայաստանում և Չինաստանում, քննարկեցին երկկողմ տնտեսական համագործակցության ներկա վիճակը և հետագա զարգացման առաջնահերթությունները, դրականորեն գնահատեցին անցած տարիների ընթացքում հայ-չինական միջկառավարական առևտրատնտեսական հանձնաժողովի գործունեությունը երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների առաջամղման գործում և նշեցին այդ գործունեության առավել ակտիվացման անհրաժեշտությունը:

Այնուհետև սկսվեց հանձնաժողովի լիազումար նիստը, որը համառոտ խոսքերով բացեցին Սյույ Թունկայը և Արտաշես Թումանյանը: Կողմերը կարևորեցին ոչ միայն հայ-չինական երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների հետագա զարգացման խթանումը, այլև Առևտրի համաշխարհային կազմակերպության և միջազգային այլ առևտրատնտեսական կառույցների շրջանակներում համագործակցության սերտացումը: Ա. Թումանյանը, մասնավորապես նշեց, որ չնայած աճի դրական միտումներին, երկկողմ առևտրաշրջանառության ծավալն իր ներկա արտահայտությամբ բավարար չէ և ընդգծելով հայ-չինական առևտրատնտեսական հարաբերությունների աշխուժացման անհրաժեշտությունը, ինչին, հայկական կողմի կարծիքով, կարող են նպաստել նոր գաղափարների շրջանառումը, համատեղ նոր ձեռնարկությունների ստեղծումը և երկկողմ ծրագրերի

իրականացումը, հայկական կողմից գիտա-տեխնոլոգիական ներդրումները: Հայ-չինական առևտրատնտեսական հարաբերությունների վերլուծությամբ և հեռանկարների ուրվագծմամբ առաջինը հանդես եկավ հանձնաժողովի չինական մասի նախագահը: Նա նշեց, որ հանձնաժողովի նախորդ նիստից անցած մոտ 2.5 տարվա ընթացքում երկու երկրների միջև առևտրատնտեսական համագործակցության ոլորտում արձանագրվել են դրական տեղաշարժեր, միաժամանակ ընդգծելով, որ ՉԺՀ կառավարությունը մեծ նշանակություն է տալիս Հայաստանի Հանրապետության հետ այդ համագործակցության էլ ավելի ամրապնդմանն ու ընդլայնմանը: Նա հակիրճ ներկայացրեց Չինաստանի սոցիալ-տնտեսական ոլորտը և արտաքին առևտրատնտեսական հարաբերությունները բնութագրող հիմնական միտումներն ու ցուցանիշները, որոնց առկայությամբ ուրվագծվում են երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների նշանակալի առաջամղման իրական հնարավորություններ:

Պատասխան խոսքում հանձնաժողովի հայկական մասի նախագահի տեղակալը Արմեն Բայբուրդյանը, շնորհակալություն հայտնելով նիստի աշխատանքների գերազանց կազմակերպման և վերլուծական տեղեկատվության համար, նշեց, որ Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը ևս կարևոր նշանակություն է տալիս ՉԺՀ-ի հետ համագործակցության զարգացմանը՝ ելնելով թե՛ ավանդական բարիդրացիական հարաբերություններից, և թե՛ այն իրողությունից, որ Չինաստանի արտաքին քաղաքականությունը նպաստում է աշխարհում կայունության և խաղաղության հաստատմանը, երկկողմ և բազմակողմ տնտեսական փոխշահավետ գործընկերության ծավալմանը: Ուստի ՉԺՀ-ի հետ բոլոր ոլորտներում հարաբերությունների հետագա զարգացումը, հարավկովկասյան տարածաշրջանում չինական կողմի առավել ակտիվ ընդգրկումը դիտվում է որպես դրական գործոն: Հայկական կողմի գիտա-տեխնոլոգիական ներուժին Չինաստանի տնտեսական հզոր պոտենցիալի շաղկապմամբ, երկկողմ առևտրատնտեսական համագործակցության հնարավորությունների բացահայտումը, ըստ նրա, ի գորու է դառնալու հայ-չինական բարեկամության ամրապնդման կարևոր բաղադրիչ՝ փոխլրացնելով հաստատված քաղաքական հարաբերությունների բարձր մակարդակը:

Ա. Բայբուրդյանը համաձայնեց հանձնաժողովի նախորդ նիստից հետո երկկողմ առևտրատնտեսական հարաբերություններում արձանագրված դրական տեղաշարժերի վերաբերյալ չին գործընկերոջ գնահատականին՝ որպես ապացույց վկայաբերելով առաջընթացը մի շարք երկկողմ ծրագրերի իրականացման գործում: Նա, մասնավորապես, անդրադարձավ երկկողմ առևտրատնտեսական համագործակցության խոշորագույն ծրագրին՝ «Շանսի-Նաիրիտ. սինթետիկ կաուչուկներ» ՀՁ ստեղծմանը և հույս հայտնեց, որ կողմերի հոգաձու և գործնական ջանքերի գործադրմամբ ծրագիրը կհաջողվի ավարտել նախանշված ժամկետներում՝ սինթետիկ կաուչուկների արտադրության համատեղ նոր կարողությունը Չինաստանում գործարկելով 2006 թվականին: Նա երկկողմ տնտեսական համագործակցության հետագա վերընթաց զարգացման կարևոր գրավական համարեց ինչպես ընթացքում գտնվող համատեղ ծրագրերի արդյունավետ եզրափակումը և դրանց շարունակականության և ընդարձակման ապահովումը, այնպես էլ այդ համագործակցությունը մշտապես թարմ ծրագրերով հարստացնելը: Ա. Բայբուրդյանը, մասնավորապես, առաջարկեց ավելի մեծ ուշադրություն դարձնել համակարգչային ծրագրավորման, տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցությանը, նշելով, որ գիտատար այդ ճյուղերը Հայաստանում ներկայումս բուռն զարգացում են ապրում, ներառյալ software-ի արտահանումը, որը ներկայումս հասնում է մոտ 50 մլն ԱՄՆ դոլարի՝ կազմելով ՀՆԱ 1.7 տոկոսը: Որպես օրինակ նշվեց օդանավակայանների ղեկավարման ապահովման



հայկական համակարգչային ծրագրափաթեթը, որը միջազգային ճանաչում է ստացել և ներկայումս օգտագործվում է, օրինակ, Lnu Անշելթսի օդանավակայանի կողմից:

Ա. Բայբուրդյանն անդրադարձավ մի շարք հատուկ ծրագրերի իրականացման ուղղությամբ Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի և չինական CAEIT ընկերության միջև համագործակցության հաջող օրինակին, միաժամանակ նշելով, որ վերջին շրջանում այստեղ նկատված որոշ տեղապատույտը հարկ է հաղթահարել՝ նոր ծրագրերի նախաձեռնմամբ անցնելով համագործակցության երրորդ փուլին և վերջինիս իրականացումն ապահովել ֆինանսական նոր հոսքերի պեղմամբ: Նոր փուլի ծրագրերի վերաբերյալ հայկական կողմը պատրաստ է ներկայացնել համապատասխան պայմանագիր:

ՀՀ ԱԳ նախարարի տեղակալը բարձր գնահատեց չինական կողմի ջանքերը հայ մասնագետների համար Չինաստանում վերապատրաստման դասընթացների կազմակերպման ուղղությամբ, նշելով, որ այս ոլորտում հիրավի բեկում է արձանագրվել՝ ներկայումս ՉԺՀ-ում նման դասընթացների են մասնակցում Հայաստանի մի շարք գերատեսչությունների 20 ներկայացուցիչներ՝ ուսումնասիրելով տնտեսական բարեփոխումների և կառավարման ոլորտին առնչվող հարցեր, իսկ նրանց վերադարձից անմիջապես հետո Չինաստան կժամանեն ևս 20 հայ մասնագետներ:

Արձանագրելով, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում են չինական կապիտալի մասնակցությամբ 37 ընկերություններ, Ա. Բայբուրդյանը սակայն նշեց, որ այդ ընկերություններում չինական ներդրումների գումարային արտահայտությունը չափազանց փոքր է՝ 11.000 ԱՄՆ դոլար և նկատեց, որ հայկական կողմն ակնկալում է չինական ներդրումների զգալի ավելացում Հայաստանի տնտեսության այն ոլորտներում, որոնք ներկայումս արդեն առաջընթաց են ապրում օտարերկրյա կապիտալի ներդրումների օգնությամբ: Ուստի նա հայ-չինական միջկառավարական հանձնաժողովի աշխատանքի կարևոր խնդիր համարեց ջանքերի գործադրումը չինական նոր ներդրումների հրապուրման ուղղությամբ:

Երկկողմ տնտեսական համագործակցության խթանմանը, ըստ ելույթ ունեցողի, մեծապես կնպաստեն նաև տեղեկատվության օպերատիվ փոխանակումը հայտարարված միջազգային մրցույթների, ինչպես նաև երկու երկրներում կազմակերպվող տնտեսական ուղղվածության ցուցահանդեսների և տոնավաճառների վերաբերյալ: Այս ուղղությունն աշխուժացնելուն կարող է նպաստել Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի ներկայացուցչության բացումը Չինաստանում, մանավանդ որ ՀՀ ԱԱՊ-ն արդեն կուտակել է նման փորձ: Ա. Բայբուրդյանը չինական կողմին տեղեկացրեց, որ ագրոարդյունաբերական և ագրովերամշակման ոլորտների զարգացման նպատակով Համաշխարհային բանկը Հայաստանին է տրամադրում խոշոր վարկ, ընդ որում, հայկական կողմը կարող է համապատասխան գյուղմեքենասարքավորումների գնումներ կատարել Չինաստանից: Այս իմաստով որպես կոնկրետ ոլորտներ նա նշեց մսի վերամշակումը, փոքր հզորության աղացները և ալրաղացները, սերմամշակման և սերմագտման սարքավորումները:

Հանձնաժողովի չինական մասի նախագահը, շնորհակալություն հայտնելով հայ գործընկերոջը հանգամանալի ներկայացման համար, ընդգծեց հայկական կողմից հնչած առաջարկությունների գործնական բնույթը և համաձայնեց, որ նշված ոլորտներում կան երկկողմ համագործակցությունը խթանելու իրական հնարավորություններ: Միաժամանակ, նա նշված ոլորտներին ավելացրեց օպտիկան և մանածագործվածքեղենի հումքն ու արտադրությունը:

Նա առանձնապես կարևոր համարեց այն գործոնների ու հանգամանքների վերլուծությունը, որոնք խոչընդոտիչ դեր են կատարում հայ-չինական առևտրատնտեսական համագործակցության ծավալման ճանապարհին: Այդ իմաստով նա առանձնացրեց հետևյալները.

- ուղղակի կապերի անբավարար բնույթը և քանակը, այդ թվում և գործարարների միջև,
- տրանսպորտային և բեռնափոխադրումային ուղիների յուրացման հետ կապված բարդությունները,
- տեղեկատվության փոխանակման պակասը,
- շփումների և փոխայցելությունների անբավարարությունը,
- երկուստեք անբավարար մասնակցությունը Հայաստանում և Չինաստանում կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին և տոնավաճառներին,
- երկկողմ ապրանքաշրջանառության սահմանափակ ծավալները,
- գիտատեխնիկական համագործակցության ցածր մակարդակը:

Նա, մասնավորապես, առաջարկեց բազմապատկել ջանքերը հայ-չինական տնտեսական համագործակցության առանցքային ծրագրի՝ «Շանսի-Նաիրիտ. սինթետիկ կաուչուկներ» ՀԶ ստեղծման ուղղությամբ:

Միաժամանակ նշվեց, որ չինական կողմը հատուկ ուշադրություն է դարձնում Հայաստանի բնական ռեսուրսներին և հետաքրքրված է ինչպես հանքարդյունաբերության ոլորտում համատեղ ձեռնարկությունների ստեղծմամբ, այնպես էլ հումքի, հատկապես, պղնձի և մոլիբդենի ձեռքբերմամբ:

Նկատի ունենալով Հայաստանի գիտատեխնիկական զգալի ներուժի գործոնը, միջկառավարական հանձնաժողովի չինական մասի նախագահը նշեց, որ դեռևս անբավարար է երկկողմ համագործակցությունը նշված ոլորտում: Նույն մտահոգությունը տարածվում է գյուղատնտեսական ոլորտի վրա, որտեղ դեռևս անբավարար են իրականացվում կողմերի հնարավորությունները էլ ավելի արդյունավետ համագործակցություն ծավալելու ուղղությամբ:

Չինական կողմը ուշադրություն հրավիրեց էլեկտրոնային կոմերցիայի լայն կիրառմանը (օրինակ, տեղեկատվության ձեռքբերմանը ՉԺՀ առևտրի նախարարության «Չինական ապրանքներ» վեբ-կայքից), գործարար համաժողովների կազմակերպման ուղղությամբ ջանքերի գործադրմանը: Հայկական կողմի ուշադրությունը հրավիրվեց հետևյալին.

- չինական կողմի հետաքրքրվածությունը՝ մասնակցելու «Մարմարիկ» հիդրոտեխնիկական օբյեկտի /ամբարտակի/ վերակառուցմանը,
- կառավարական դրամաշնորհների և վարկային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը,
- չինական ընկերությունների պատրաստակամությունը ընդգրկվելու Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտում:

Նիստի առաջին օրվա ավարտին կողմերը ստորագրեցին համաձայնագիր, որով Չինաստանի կողմից Հայաստանին է տրամադրվում 10 միլիոն չինական յուանի /մոտ 1 միլիոն 120 հազար ամերիկյան դոլարի/ նոր անհատույց օգնություն, ինչպես նաև փոխանակեցին նամակներ 2004թ. սեպտեմբերի 26-30-ը ՀՀ Նախագահ Ռոբերտ Զոհարյանի՝ ՉԺՀ կատարած պետական այցի շրջանակներում տրամադրված անհատույց օգնության 7.5 միլիոն յուանի բաժնեմասի օգտագործման վերաբերյալ /գյուղմեքենասարքավորումների տրամադրում՝ ըստ հայկական կողմի ներկայացրած

ցանկի/:

Սեպտեմբերի 27-ին հանձնաժողովը շարունակեց աշխատանքները: Երկրորդ համագործակցության ներկա վիճակի, առաջնահերթությունների և կոնկրետ ծրագրերի ու առաջարկությունների շուրջ տեղի ունեցավ մտքերի փոխանակություն հանձնաժողովի հայկական և չինական մասերի անդամների միջև:

Ամփոփելով Հայ-չինական միջկառավարական հանձնաժողովի չորրորդ նիստի աշխատանքի արդյունքները, ՀՀ ԱԳ փոխնախարար Արմեն Բայբուրդյանը նշեց նիստի գերազանց կազմակերպվածությունը, քննարկումների բովանդակայնությունն ու կառուցողական մթնոլորտը՝ հայտնելով, որ նիստի ընթացքում հայկական կողմից հնչած առաջարկներն առաջիկայում գրավոր կներկայացվեն չինական կողմին:

Իր ամփոփիչ ելույթում Հայ-չինական միջկառավարական հանձնաժողովի չինական մասի նախագահ Սյույ Թունկայը ևս մեկ անգամ գոհունակություն հայտնեց հանձնաժողովի արդյունավետ աշխատանքի կապակցությամբ, նշելով հանձնաժողովի հայկական կողմի լավ նախապատրաստվածությունը և ներկայացված առաջարկների կոնկրետ բնույթը: Որպես հայ-չինական տնտեսական համագործակցության խթանման մոտակա խնդիր՝ նա կարևորեց Համաշխարհային բանկից, Ասիական զարգացման բանկից, չինական EXIM բանկից, միջազգային ֆինանսավարկային այլ կառույցներից համատեղ ծրագրերի իրագործման նպատակով վարկային ռեսուրսների հայթայթման հնարավորությունների օգտագործումը, ներդրումային ծրագրերի վերաբերյալ հայկական կողմից գրավոր առաջարկների շուտափույթ ստացումը:

Մեկ անգամ ևս անդրադառնալով ՉԺՀ կատավարության կողմից 2005թ.

Հայաստանին հատկացված 5 և 10 միլիոն յուանի անհատույց օգնություններին, Սյույ Թունկայը խնդրեց հնարավոր սեղմ ժամկետում առաջարկներ ներկայացնել ՉԺՀ կառավարության կողմից ՀՀ կառավարությանը տեխնիկա-տնտեսական համագործակցության մասին համաձայնագրերով հատկացված անհատույց օգնության նպատակային օգտագործման վերաբերյալ: Նա խոստացավ, որ չինական կողմը մեծ ուշադրությամբ կուսումնասիրի այդ առաջարկները և կանի հնարավորը հայ-չինական առևտրատնտեսական համագործակցությունը որակական սոր աստիճանի բարձրացնելու համար:

Հայ-չինական միջկառավարական հանձնաժողովի չորրորդ նիստի ավարտին, հայկական պատվիրակությունը Սյույ Թունկայի ուղեկցությամբ մեկնեց Շանհայ, որտեղ կազմակերպվեցին հանդիպում Շանհայի քաղաքապետարանի ղեկավարության հետ և այցելություն ZTE կորպորացիայի գիտահետազոտական կենտրոն:

Հանձնաժողովի չորրորդ նիստի աշխատանքները լուսաբանվեցին հայկական և չինական ՉԼՄ-ներում:

### **Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության միջեւ տնտեսական եւ գիտատեխնիկական հարցերով միջկառավարական հանձնաժողով**

2004 թ. հոկտեմբերի 21-23-ը Մինսկում կայացավ տնտեսական համագործակցության հարցերով հայ-բելառուսական միջկառավարական հանձնաժողովի վեցերորդ համատեղ նիստը, որի արդյունքում ստորագրվեց նիստի եզրափակիչ Արձանագրություն և ձեռք բերվեցին մի շարք պայմանավորվածություններ զբոսաշրջության, գյուղատնտեսության, կրթության և գիտության, մշակույթի, էներգետիկայի բնագավառներում հայ-բելառուսական համագործակցության կոնկրետ ուղղությունների վերաբերյալ:

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են իրականացվել վերոնշյալ

արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների և ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ուղղությամբ:  
Հանձնաժողովի Երևանում կայանալիք հերթական՝ յոթերորդ նիստը որոշվել է անցկացնել 2005թ. հոկտեմբերի երրորդ տասնօրյակին:

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են իրականացվել 2004 թ. հոկտեմբերի 21-23-ը Մինսկում կայացած տնտեսական համագործակցության հարցերով հայ-բելառուսական միջկառավարական հանձնաժողովի վեցերորդ համատեղ նիստի արդյունքում ստորագրված եզրափակիչ Արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների և ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ուղղությամբ:

Տնտեսական համագործակցության հարցերով հայ-բելառուսական միջկառավարական համատեղ հանձնաժողովի հայկական մասի անհատական նոր կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի 30.11.2005 թ. N 944-Ա որոշմամբ: 2005 թ. դեկտեմբերի 4-7-ը Երեւանում նախատեսվում էր հայ-բելառուսական միջկառավարական հանձնաժողովի հերթական՝ յոթերորդ համատեղ նիստի անցկացումը, որը, սակայն, տեխնիկական պատճառով չի կայացել: Ներկայումս բանակցություններ են տարվում նիստի անցկացման նոր ժամկետների հստակեցման ուղղությամբ:

### **Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի Հանրապետության միջեւ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողով**

Հանձնաժողովի հերթական՝ չորրորդ նիստը տեղի է ունեցել 2005թ. սեպտեմբերի 29-30-ին:

Քննարկվել են հայ-վրացական տնտեսական հարաբերություններին առնչվող բազմաբնույթ հարցեր՝ հիմնականում ողղված էներգետիկայի, տրանսպորտի, կապի, գյուղատնտեսության, արդյունաբերության, առողջապահության, ֆինանսների, կրթության, մշակութային և այլ ոլորտներում ստեղծված իրավիճակի բարելավմանը: Հայաստանի և Վրաստանի միջև տնտեսական համագործակցության հիմնական ուղղություններն են էներգետիկան և տրանսպորտը: Էներգետիկ համագործակցության խորացումը կնպաստի երկու երկրների միջև նոր՝ 3-րդ, 330-400 կվ հզորությամբ բարձրավոլտ հաղորդակցման գծի կառուցման վերաբերյալ 2005թ. ընթացքում ձեռք բերված սկզբունքային պայմանավորվածության իրականացմանը, ինչը հնարավորություն կտա Հայաստանի և Վրաստանի էլեկտրահամակարգերին հետագայում անցնել զուգահեռ աշխատանքի ռեժիմի: Կարևոր է նաև, որ շինարարության համար ֆինանսական միջոցների մեծ մասը տրամադրելու է Վրաստանը՝ Հայաստանին էներգետիկ բնագավառում ունեցած պարտքի հաշվին:

Ինչ վերաբերում է տրանսպորտային համագործակցությանը, ապա, նկատի ունենալով, որ Հայաստանի բեռնափոխադրումների գերակշռող մասն իրականացվում է Վրաստանի տարածքով, կարևորվում է հայաստանյան բեռնափոխադրումների համար նախկինում սահմանված զեղչերի պահպանումը նաև 2005թ. ընթացքում և ձեռք բերված պայմանավորվածությունները 2006 թվականի համար:

2005թ. շարունակվել են Հայաստանի և Վրաստանի միջև պետական սահմանի սահմանագծման և սահմանազատման աշխատանքները: Իրականացվել են

բանակցություններ՝ հանձնաժողովների նախագահների և փորձագետների մակարդակով: Բանակցային գործընթացը կշարունակվի 2006 թվականին:

Նիստի ընթացքում ստորագրվել է երկու փաստաթուղթ՝

-Արձանագրություն «Հայաստանի և Վրաստանի կառավարությունների միջև միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության մասին Համաձայնագրի մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ»:

-Համաձայնագիր «Հայաստանի և Վրաստանի կառավարությունների միջև Հայաստանին Վրաստանի պետական պարտքի վերաձևակերպման մասին»:

### **Հայ-հունական տնտեսական, արդյունաբերական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողով**

Հետևողական աշխատանքներ են իրականացվել հանձնաժողովի 2002թ. նոյեմբերի 27-28-ը Երևանում կայացած երրորդ նիստի արդյունքում ստորագրված Փոխըմբռնման հուշագրի հանձնարարականների կատարման նպատակով, որի արդյունքում իրականացվել են առևտրատնտեսական, գիտատեխնիկական, հումանիտար և այլ բնույթի ծրագրեր: Հունական կողմը վերապատրաստման դասընթացներ է կազմակերպել Հունաստանում գյուղատնտեսության և զբոսաշրջության բնագավառի հայաստանյան մասնագետների համար: Հայ-հունական միջկառավարական հանձնաժողովի հերթական 4-րդ նիստը տեղի ունեցավ 2005թ. նոյեմբերի 3-ին: Լսվեցին՝

1. Հայաստանի Հանրապետության և Հունաստանի Հանրապետության միջև տնտեսական, արդյունաբերական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 3-րդ նիստի արձանագրության կատարման ընթացքի մասին: Որոշվեց՝

Ընդունել ի գիտություն հանձնաժողովի անդամների տեղեկատվությունը՝ ըստ առանձին բնագավառների, մասնավորապես՝

ա. Էներգետիկա աշխատանքներ են իրականացվել Էներգետիկայի բնագավառի օրենսդրության հունական փորձը Հայաստանում ներդնելու ուղղությամբ, որն առավելապես կնպաստի այդ բնագավառի մասնավոր հատվածի գործունեության բարելավմանը:

բ. Ֆինանսներ ստորագրվել և հաջողությամբ իրականացվում են մաքսային և հարկային հարցերին վերաբերող միջկառավարական համաձայնագրերը:

գ. Գիտություն և կրթություն աշխատանքներ են իրականացվում «ՀՀ կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև կրթության, գիտության և մշակույթի բնագավառներում համագործակցության մասին 2004-2007 տարիների համար» Ծրագրի իրագործման ուղղությամբ:

դ. Առևտուր և զբոսաշրջություն համագործակցությունը հիմնականում զարգացել է

գբոսաշրջության գծով, որի արդյունքում Հայաստանում հիմնվել է տուրիզմի ինստիտուտ: Ինչ վերաբերում է առևտրատնտեսական կապերին, ապա դրանք վերջին երեք տարիների ընթացքում նվազել են:

ե. Մշակույթ նախարարությունները համագործակցում են «ՀՀ կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև կրթության, գիտության և մշակույթի բնագավառներում համագործակցության մասին 2004-2007 տարիների համար» Ծրագրին համապատասխան, սերտ կապեր են հաստատվել Սալոնիկի բյուզանդական և պոստ-բյուզանդական կենտրոնի հետ, ծավալվել է համագործակցությունն հնէաբանության, հուշարձանների վերականգնման և պահպանության ուղղությամբ:

զ. Գյուղատնտեսություն հանձնաժողովի նախորդ նիստից հետո ընկած ժամանակահատվածում շարունակվել են աշխատանքները հայաստանյան մասնագետների Հունաստանում վերապատրաստման դասընթացներին մասնակցելու, գիտության բնագավառում համատեղ գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու ուղղությամբ:

Հունական Agroland SA ընկերությունը հանրապետության Արմավիրի մարզում ստեղծել է շուրջ 300.000 եվրո արժողությամբ մեքենատրակտորային կայան և առաջիկայում նմանատիպ կայան կստեղծվի նաև Շիրակի մարզում: Հունական կողմը միշտ արձագանքել է Հայաստանի բնակլիմայական անբարենպաստ պայմանների հետևանքով առաջացած դժվարություններին և ցուցաբերել ֆինանսական օգնություն: Առանձին ծրագրեր են իրականացվել հանրապետության նախկին Նոյեմբերյանի շրջանում (պտղաբուծություն՝ 600.000 եվրո) և Դիլիջան քաղաքում: Ծարունակվում են աշխատանքները նմանատիպ ծրագրեր իրականացնելու ուղղությամբ Մասիսի (բանջարեղենի վերամշակում) և Ապարանի (սպանդանոց) շրջաններում:

### **Առևտրատնտեսական հարցերով հայ-ղազախական միջկառավարական հանձնաժողով**

2005թ. հոկտեմբերի 12-13-ին Երևանում տեղի ունեցավ հայ-ղազախական միջկառավարական առևտրատնտեսական համագործակցության հանձնաժողովի առաջին նիստը, որի համանախագահներն են հայկական կողմից՝ գյուղնախարարի առաջին տեղակալ Ս. Ավետիսյանը, իսկ ղազախական կողմից՝ ՂՀ ԱԳ նախարարի տեղակալ Ն. Օնժանովը:

Նիստում քննարկվեցին երկու պետությունների միջև իրավապայմանագրային դաշտի ընդլայնման, առևտրատնտեսական համագործակցության զարգացման, գյուղատնտեսության, գբոսաշրջության, հումանիտար և տրանսպորտային ոլորտներում համագործակցության հարցերը, որոնց վերաբերյալ ընդունվեցին համապատասխան որոշումներ:

Նշվեց նաև ԵԱՀԿ-ում համագործակցելու անհրաժեշտությունը:

Նիստի ժամանակ ՀՀ և ՂՀ միջև ստորագրվեց համաձայնագիր՝ արխիվային գործի բնագավառում համագործակցության մասին: Որոշվեց, որ հայ-ղազախական

միջկառավարական առևտրատնտեսական համագործակցության հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա 2006թ. երկրորդ կեսին, Աստանա քաղաքում:

### **Հայաստանի Հանրապետության եւ Լեհաստանի Հանրապետության միջև համագործակցության միջկառավարական հանձնաժողով**

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2004թ. հունիսի 18-ի 397-Ա որոշմամբ հաստատվել է հայ-լեհական միջկառավարական համատեղ հանձնաժողովի հայկական մասի անհատական կազմը: Հրավիրվել է հանձնաժողովի հայկական մասի նիստ, որի ընթացքում քննարկվել են հանձնաժողովի համատեղ նիստում քննարկման ենթակա հարցեր: Սակայն մինչ այժմ հայտնի չէ հանձնաժողովի լեհական կողմի անհատական կազմը և համանախագահը, ուստի անհրաժեշտ է համարվում դիվանագիտական ուղիներով դիմել լեհական կողմին այդ մասին տեղեկատվություն ստանալու համար, որից հետո հնարավոր կլինի բանակցություններ վարել հանձնաժողովի առաջին համատեղ նիստի անցկացման վայրի և ժամկետների մասին:

### **Հայ-սիրիական միջկառավարական հանձնաժողով**

Շարունակվել են աշխատանքները հանձնաժողովի երկրորդ նիստի հանձնարարականների կատարման ուղղությամբ, ակտիվ համագործակցություն է ծավալվել գյուղատնտեսության բնագավառում: Ներկայումս երկու երկրների իրավասու գերատեսչությունների միջև համագործակցություն է ծավալվել նաև բնապահպանության, սեյսմոլոգիայի, էներգետիկայի, ոռոգման համակարգերի բնագավառներում: Հայ-սիրիական միջկառավարական հանձնաժողովի հերթական՝ երրորդ նիստը Դամասկոսում անցկացնելու հարցերը քննարկվել են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարար, հայ-սիրիական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Դ. Լոքյանի և Սիրիայի Արաբական Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Ա. Առնուսի միջև 2005 թվականի հունիսի 29-ին Երևանում կայացած հանդիպման ընթացքում:

### **Հայաստանի Հանրապետության եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջկառավարական հանձնաժողով**

Հայ-եգիպտական տնտեսական, գիտական և տեխնիկական համագործակցության համատեղ հանձնաժողովի չորրորդ նիստը կայացավ Կահիրեում 2005թ. դեկտեմբերի 5-6-ը:

Հայկական պատվիրակությունը գլխավորում էր Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար Հովիկ Աբրահամյանը:

Եգիպտական պատվիրակությունը գլխավորում էր Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջազգային համագործակցության նախարար Ֆայզա Աբու Ալ Լազան:

Տարբեր ոլորտների հայ գործարարներ մասնակցեցին որոշ պաշտոնական հանդիպումների՝ ի լրումն հայ գործարարների և եգիպտացի գործընկերների միջև

Եգիպտական առևտրի պալատների գլխավոր դաշնությունում կայացած համաժողովի:

Հանդիպումներն անցան բարեկամական և կառուցողական մթնոլորտում և արտացոլեցին հայկական և եգիպտական կողմերի տեսակետների սերտացումը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ հարցերի վերաբերյալ: 2005թ. դեկտեմբերի 5-8-ը կայացավ Հայաստանի վարչապետի այցը Եգիպտոս, որը համընկավ Հայ-եգիպտական տնտեսական, գիտական և տեխնիկական համագործակցության համատեղ հանձնաժողովի չորրորդ նիստի անցկացման հետ: Անկասկած, Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարյանի այցելությունը և երկու երկրների վարչապետների միջև կայացած քննարկումները նպաստեցին հայ-»եգիպտական հարաբերությունների ամրապնդմանն ու խորացմանը, ինչպես նաև աջակցեցին գործարար շրջանակներին:

Հանդիպումների ժամանակ կողմերը փոխանակեցին տեղեկատվություն իրենց երկրների տնտեսությունների վերաբերյալ, նաև քննարկեցին 2002թ. հոկտեմբերին Երևանում կայացած համատեղ հանձնաժողովի երրորդ նիստի ժամանակ ձևաբանված պայմանավորվածությունն»-ի կատարումը:

Նշվեցին, որ այդ նիստի ժամանակ արված համագործակցության վերաբերյալ առաջարկությունների մեծ մասը մնացել է անկատար, և նրանք իրենց ցանկությունը արտահայտեցին բարելավելու տնտեսական համագործակցության ներկա մակարդակը: Քննարկվեցին երկկողմ համագործակցության ընդլայնման համար փոխադարձ հետաքրքրություններ ներկայացնող հարցեր:

Երկու կողմերը ընդունեցին, որ առևտրի ծավալի ու տնտեսական համագործակցության ներկա մակարդակը չի համապատասխանում ոչ երկու երկրների նշանակալի ներուժին և ոչ էլ նրանց մեջ եղած գերազանց քաղաքական հարաբերություններին:

Այդուհանդերձ, երկու կողմերը իրենց գոհունակությունն արտահայտեցին հայկական և եգիպտական հիվանդանոցների, Կահիրեի և Երևանի համալսարանների և VACSERA ընկերության ու նրա հայկական գործընկերոջ համագործակցության մակարդակով:

Այս առումով, նկատի ունենալով, որ սա հայ-եգիպտական տնտեսական, գիտական և տեխնիկական համագործակցության համատեղ հանձնաժողովի չորրորդ նիստն է, ինչպես նաև երկու երկրների միջև հնարավոր համագործակցության ոլորտների բազմազանությունը, երկու կողմերը համաձայնվեցին կենտրոնանալ խոստումնալից հստակ ոլորտների վրա, որոնք դրական ազդեցություն կունենան երկկողմ համագործակցության վրա:

Համատեղ հանձնաժողովի չորրորդ նիստի ժամանակ երկու կողմերը ստորագրեցին հետևյալ փաստաթղթերը.

1. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության Կառավարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության Կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին,
2. Փոխըմբռնման հուշագիր Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության բնակեցման, կոմունալ կառույցների և քաղաքային համայնքների նախարարության միջև,
3. Ծրագիր Հայաստանի Հանրապետության Կառավարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության Կառավարության միջև կրթության և գիտության



բնագավառներում 2005-2008 թթ. համագործակցության մասին,

4. Գործնական ծրագիր Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության մշակույթի նախարարության միջև 2006-2008 թթ. մշակութային համագործակցության մասին:

Տնտեսական, գիտական և տեխնիկական համագործակցության կարգավիճակը և հեռանկարները.

Երկու կողմերը նշեցին, որ երկու երկրների միջև տնտեսական, գիտական և տեխնիկական համագործակցության կարգավիճակը չի արտացոլում նրանց իրական ներուժը և քաղաքական հարաբերությունների մակարդակը: Նրանք համաձայնվեցին ընդլայնել համագործակցությունը ներքոհիշյալ ոլորտներում.

Առևտուր, ներդրումներ և ֆինանսներ

Երկու կողմերը նշեցին, որ անցած երկու տարիների ընթացքում առևտրի ծավալը չի արձանագրել դրական միտումներ, և նրանց միջև առևտրական հարաբերություններն ընդլայնելու համար անհրաժեշտ է հետամուտ լինել ոչ ավանդական մոտեցումներին:

Երկու կողմերը պայմանավորվեցին վերաակտիվացնել Եգիպտական առևտրի պալատների դաշնության և Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի միջև համագործակցության արձանագրությունը՝ ստորագրելով համատեղ բաժանմունքներ հիմնելու վերաբերյալ համաձայնագիր:

Երկու կողմերը համաձայնվեցին շարունակել բանակցությունները Եգիպտոսում Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի ներկայացուցչության հիմնադրման վերաբերյալ:

Երկու կողմերը նաև համաձայնեցին դյուրացնել Եգիպտոսի գործարարների ասոցիացիայի և Հայաստանի գործարարների միության միջև համագործակցության մասին համաձայնագրի նախագծի ստորագրումը, ինչպես նաև փոխանակել տեղեկատվություն գործարար հնարավորությունների և երկու երկրներում հարաբերական առավելություն ունեցող ապրանքատեսակների վերաբերյալ: Այս առումով, Եգիպտոսը կարող է Հայաստան արտահանել հետևյալ ապրանքատեսակները՝

- կահույք, տեքստիլ, դեղորայք, դեղագործական արտադրանք, կենցաղային իրեր, գորգեր, մրգերի և հյութերի որոշ տեսակներ;

Ի լրումն, Հայաստանը կարող է Եգիպտոս արտահանել հետևյալ ապրանքատեսակները՝

- ջրեղեն և սննդամթերք, էլեկտրատեխնիկական սարքավորումներ, հաստոցներ, քիմիական նյութեր:

Եգիպտական կողմը հայցել է հայկական կողմի աջակցությունը հայկական շուկաներում եգիպտական ռազմաարդյունաբերական ընկերությունների կողմից

արտադրվող քաղաքացիական նշանակության ապրանքների համար շուկայական հետազոտություններ կատարելու հարցում: Այդ աջակցությունն իր մեջ ներառում է տեղեկատվության տրամադրում հետևյալ ապրանքատեսակների շուկաների վերաբերյալ. խոհանոցային պարագաներ, սպասք, էլեկտրական հովհարներ, այլումինե տարաներ և այլն: Եգիպտական կողմը հայկական կողմին կտրամադրի համագործակցության համար առաջարկվող հարցերի (ապրանքատեսակների) ցանկը:

Որպես երկու կողմերին առևտրական հարաբերությունների ամրապնդմանը նպաստելու գործնական լուծում, որոշվեց յուրաքանչյուր տարի կազմակերպել եգիպտական շաբաթ Երևանում և հայկական շաբաթ Կահիրեում՝ ներառյալ առևտրական ցուցահանդեսներ:

Երկու կողմերը պայմանավորվեցին խրախուսել երկու երկրների մասնավոր հատվածներին հիմնելու Երևանում եգիպտական առևտրի կենտրոն և Կահիրեում հայկական առևտրի կենտրոն:

Եգիպտական կողմը շնորհավորեց հայկական կողմին Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ) անդամակցելու կապակցությամբ: Նաև, հայկական կողմի հետ համաձայնեցվեց ԱՀԿ-ում՝ մասնավորապես և բազմակողմ առևտրական համակարգում՝ ընդհանրապես, դիրքորոշումները համակարգելու խնդիրը: Այս առումով, հայկական կողմն իր շնորհակալությունը հայտնեց Եգիպտոսին ԱՀԿ-ում իր անդամակցությանն աջակցելու համար:

Երկու կողմերը համաձայնեցին ընդլայնել համագործակցությունը բանկային միավորների միջև, մասնավորապես՝ կազմակերպել փոխայցելություններ և փոխանակել տեղեկատվություն ֆինանսական և բանկային հարցերի մասին:

Երկու կողմերը համաձայնեցին իրենց համապատասխան մարմինների միջև վերսկսել բանակցությունները՝ մաքսային բնագավառում փոխադարձ աջակցության և համագործակցության մասին Համաձայնագրի նախագծի շուրջ:

Հայկական կողմն արտահայտեց հայկական մասնավոր հատվածի ցանկությունը Եգիպտոսում հիմնելու չրեդեն արտադրող ընկերություններ, ինչպես նաև կաթնամթերքի համատեղ ձեռնարկություններ, հաշվի առնելով այն փաստը, որ Եգիպտոսում սպառողական շուկան շատ ավելի մեծ է, քան Հայաստանում, և ելնելով այն հանգամանքից, որ հայկական ընկերություններն ունեն անհրաժեշտ տեխնոլոգիաներ եգիպտական շուկաներում հաստատվելու համար:

## Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Երկու կողմերն արտահայտեցին իրենց ցանկությունը՝ համագործակցելու հետևյալ ոլորտներում՝ էլեկտրոնային վճարման համակարգեր, մաքսային ծրագրերի զարգացում, հաշվապահական և ֆինանսական ձևեր, կողավորում, արհեստական ինտելեկտ, ծրագրերի զարգացում (outsourcing) և կիրառում, մուլտիմեդիա դիզայն և արդյունաբերական ավտոմատացում:

Հայկական կողմը շահագրգռված է եգիպտական ընկերությունների հետ գործարար դաշինքներ ստեղծելու հարցում: Երկու կողմերը համաձայնեցին խրախուսել համագործակցությունը տեղեկատվական տեխնոլոգիաների ICT հետազոտություններում:

## Չբոսաշրջություն

Ձգտելով խրախուսել երկու երկրների միջև զբոսաշրջային այցելություններն ու ներդրումները, եգիպտական կողմը հայկական կողմին տրամադրեց

տեղեկատվություն եզիպտոսի զբոսաշրջային ներուժի և հնարավորությունների վերաբերյալ:

Հայկական կողմը հետաքրքրություն ցուցաբերեց զբոսաշրջության բնագավառում եզիպտական կարողություններից և փորձից օգտվելու հարցում, ինչն այս առումով օգտակար կարող է հանդիսանալ Հայաստանի համար:

Հայկական կողմը տեղեկացրեց, որ արդեն իրականացվում են Երևան - Շարմ Էլ Շեյխ թռիչքներ, ինչպես նաև այն, որ մի քանի շաբաթ առաջ կայացել են քննարկումներ Արմավիա ավիաընկերության պատվիրակության և Egypt Air ընկերության միջև՝ երրորդ երկրի միջոցով Կահիրե-Երևան կանոնավոր չարտերային չվերթներ իրականացնելու հնարավորության վերաբերյալ:

Երկու կողմերն իրենց ցանկությունն արտահայտեցին համագործակցելու հետևյալ ոլորտներում՝

- երկու երկրների զբոսաշրջային հնարավորություններին ծանոթանալու նպատակով, զբոսաշրջության ոլորտի պատասխանատուների, լրագրողների և լրատվամիջոցների ներկայացուցիչների փոխայցելությունների կազմակերպում,
  - երկու երկրներում զբոսաշրջային միջոցառումների ծրագրերի փոխանակում,
  - շահավետ սակագներով, մասնավորապես՝ հոգևոր զբոսաշրջության ոլորտում զբոսաշրջային ծրագրերի կազմակերպման նպատակով երկու երկրների զբոսաշրջային գործակալների համագործակցության խրախուսում:
- Երկու կողմերը համաձայնեցին նախապատրաստել զբոսաշրջության ոլորտում համագործակցության մասին Համաձայնագիր՝ համագործակցությունը վերոնշյալ ոլորտներում ամրապնդելու նպատակով:

Էլեկտրականություն և Էներգետիկա՝

Հաշվի առնելով երկու կողմերի զարգացած կարողությունները Էներգետիկայի և Էլեկտրականության ոլորտներում, որոշեցին համագործակցել հետևյալ գործնական բնագավառներում՝

- փորձի փոխանակում Էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործման ոլորտում,
- համատեղ ձեռնարկությունների հիմնադրման խրախուսում Էլեկտրաարդյունաբերության բնագավառում,
- համագործակցություն փոքր և միջին հզորության հիդրոէլեկտրակայանների շինարարության, շահագործման և խնամքի բնագավառում,
- տեղեկատվության և փորձի փոխանակում վերականգնվող Էներգիայի բնագավառում (աղբյուրներ և միջոցներ),
- վերապատրաստում և կարողությունների ստեղծում (capacity-building)

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիտական հետազոտություններ

Երկու կողմերը խրախուսեցին համագործակցությունը գիտության և տեխնոլոգիաների բնագավառում:

Եզիպտական կողմն առաջարկեց, որ գիտական համագործակցությունն

իրականացվի հատկապես հետևյալ եղանակներով՝

- կոնֆերանսներ, սիմպոզիումներ, վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ (workshop), ցուցահանդեսներ և մասնակցություն գիտական հանդիպումներին,
- գիտական և տեխնոլոգիական տեղեկատվության ու փաստաթղթերի փոխանակում,
- երկու երկրներում համատեղ հետազոտական նախագծերի խրախուսում:

Երկու կողմերը համաձայնեցին միջկառավարական համատեղ հանձնաժողովի շրջանակներում հիմնել գիտական և տեխնիկական ենթահանձնաժողով: Եգիպտական կողմը գոհունակությամբ նշեց, որ հայկական կողմը Եգիպտոսին երկու թեկնածուական (ասպիրանտական) տեղ է հատկացրել Երևանի բժշկական համալսարանում:

Բարձրագույն կրթություն

Բարձրագույն կրթության բնագավառում համագործակցությունն ամփոփված է չորրորդ նիստի ավարտին ստորագրված Գործնական ծրագրում:

Մշակույթ

Մշակութային բնագավառում համագործակցությունն ամփոփված է չորրորդ նիստի ավարտին ստորագրված Գործնական ծրագրում:

Երիտասարդություն և սպորտ

Երկու կողմերը համաձայնեցին խրախուսել երիտասարդական կազմակերպությունների ու հաստատությունների միջև համագործակցությունը, ինչպես նաև երիտասարդական (կազմակերպությունների) ղեկավարների և սպորտային թիմերի փոխայցելությունները: Սրան վերաբերող մանրամասները կհամաձայնեցվեն երկու երկրների համապատասխան մարմինների միջև:

Համագործակցությունը երկու կողմերի միջև կներառի հետևյալ ոլորտները.

Սպորտ

- ծանր ատլետիկայի, ըմբշամարտի և մարմնամարզության բնագավառներում փորձի փոխանակում

Երիտասարդություն

- մասնակցություն (երկու անձի համար) երկու երկրներում ծրագրավորման և նորարարության բնագավառներում գիտական ակումբների կողմից կազմակերպվելիք հանդիպումներին,
- մասնակցություն (երկու անձի համար) երկու երկրներում երիտասարդ

քանդակագործների ցուցահանդեսներին,

- մասնակցություն (հինգ անձի և մեկ ղեկավարի համար) երկու երկրներում կազմակերպվելիք միջազգային երիտասարդական ճամբարներին:

#### Դպրոցականներ

Արտահայտչական արվեստում (ֆուկլոր) օժտված դպրոցականների փոխայցելություններ (13-17 տարեկան 15 դպրոցականների և 2 ղեկավարի համար՝ 15 օրով):

#### Նավթ և գազ

Երկու կողմերն ցանկություն արտահայտեցին համագործակցել հետևյալ ոլորտներում՝

- նավթատար և գազատար խողովակաշարերի նախագծում և շինարարություն,  
- գազամատակարարման բաշխիչ ցանցի շինարարության և շահագործման համար EGAZ-ի (Egypt GAZ) փորձի օգտագործում:

Հայկական կողմն արտահայտեց իր հետաքրքրությունը Եգիպտոսից ավիավառելիք ներմուծելու հարցում:

#### Գյուղատնտեսություն

Եգիպտոսի և Հայաստանի միջև գյուղատնտեսության բնագավառում համագործակցությունն ամրապնդելու համար, երկու կողմերը համաձայնեցին նախապատրաստել Ծրագիր, որը կկարգավորի հետևյալ ոլորտները՝

- հացահատիկի, հացահատիկային կուլտուրաների, ընդեղենի, ձիթատու բույսերի և բամբակի տեխնոլոգիաների բնագավառներում մասնագետների և կարճատև գիտական այցելությունների կազմակերպում,

- սննդամթերքի նմուշների հետազոտման, անասնակերի, տնկիների, սերմացուների արտադրման տեխնոլոգիաների, շաքարի, ճակնդեղի աճեցման, բանջարեղենային կուլտուրաների, ինչպես նաև բժշկական և անուշահոտ բույսերի բնագավառում մասնագետների փոխանակում,

- բանջարեղենի, մրգերի, յուղի, ճարպի և մսամթերքի արտադրության ու փաթեթավորման, ոռոգման և աղակալած հողերի վերականգնման վերաբերյալ սեմինարների և մասնագիտացված դասընթացների կազմակերպում,

- սննդի և անասնակերի քիմիական լաբորատորիաներում և հետազոտման մեթոդների ոլորտում հաջողված փորձի վերաբերյալ տեղեկատվության փոխանակում,

- տարբեր տեսակի դաշտային հացահատիկային կուլտուրաների գենետիկ և տնկային նյութերի փոխանակում,

- Հայաստանի, Եգիպտոսի և ՄԱԿ-ի պարենի ու գյուղատնտեսության կազմակերպության (FAO) միջև համագործակցության ընդլայնում:

Հայկական կողմի խնդրանքով, Եգիպտական կողմը համաձայնեց աջակցել

Հայաստանին կարտոֆիլի աճեցման բնագավառում:

Երկու կողմերը համաձայնեցին ընդլայնել համագործակցությունը Եգիպտոսի գյուղատնտեսական հետազոտությունների կենտրոնի և Հայաստանի գործընկեր հաստատության միջև:

Շրջակա միջավայրի պաշտպանություն

Երկու կողմերը համաձայնեցին զարգացնել համագործակցությունը հետևյալ ոլորտներում՝

- հանքային և երկրաբանական ռեսուրսներ,
- գեոքիմիա և գեոֆիզիկա,
- վտանգավոր երկրաբանական միջադեպեր և հիդրոերկրաբանական հետազոտումներ,
- բնապահպանական դիտանցային և թվային քարտեզագրություն,
- թափոնի կառավարում (պինդ, գյուղատնտեսական, վտանգավոր),
- բնապահպանություն,
- ծառատնկի համար մաքրված կոյուղաշրջերի օգտագործում:

ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ և ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Դեղագործական, քիմիական և բժշկական սարքավորումների հուղինգային ընկերություն

Երկու կողմերն առաջարկեցին համագործակցել հետևյալ ոլորտներում՝

- դեղագործական հումքի և ավարտուն ապրանքատեսակների արտադրություն,
- պետական և մասնավոր հատվածների միջև դեղորայքի, փորձի և առևտրական տեղեկությունների փոխանակում,
- համագործակցություն նոր դեղատեսակների հետազոտումների զարգացման բնագավառում,
- դեղագործական տարբեր բնագավառներում երկու երկրների տեխնիկական առևտրի և տեխնիկական անձնակազմի փորձի փոխանակման վերաբերյալ երկկողմ համաձայնագրերի նախաձեռնում,
- Հայաստանի առողջապահության նախարարության և բժշկական ներմուծումներում մասնագիտացված հայաստանյան ընկերությունների հետ համագործակցությամբ Հայաստանում եգիպտական բժշկական ապրանքների համար շուկայի ուսումնասիրության (մարկետիգ) իրականացում:

ՎԱՔՍԵՐԱ

Երկու կողմերը համաձայնեցին համատեղ աշխատել կողմերի միջև համաձայնեցված Պայմանագրի ռազմավարական նպատակների իրագործումն արագացնելու ուղղությամբ, որն ընդգրկվել է 2005թ. նոյեմբերի 29-ին Կահիրեում ՎԱՔՍԵՐԱ-ի տնօրեն Մոհամմեդ Աբբադիի և ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Թաթուլ Հակոբյանի հանդիպումների արդյունքում ստորագրված ամփոփիչ արձանագրության մեջ:

Եվ վերջապես, կողմերը համաձայնեցին հատուկ առաջարկներ ներկայացնել երկու երկրների շահագիգիռ մարմիններին և գործարար շրջանակներին՝ միացյալ ջանքերով փոխադրումների հարցում խոչնդոտները հաղթահարելու և այլընտրանքային փոխադրման միջոցներ գտնելու նպատակով, ինչը կոյուրացնի և կզարգացնի առևտրական հոսքերը:

Երկու կողմերը համաձայնեցին, որ Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջև տնտեսական, գիտական և տեխնիկական համագործակցության հայ-եգիպտական միջկառավարական համատեղ հանձնաժողովի հիմնադրող նիստը տեղի ունենա 2006թ. Երևանում: Հաջորդ հանդիպման հստակ ժամկետները կհամաձայնեցվեն դիվանագիտական ուղիներով:

### **Տնտեսական համագործակցության հարցերով հայ-ուկրաինական միջկառավարական հանձնաժողով**

2004 թ. մայիսի 11-ին ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանի ք. Կիև կատարած պաշտոնական այցի շրջանակներում կայացավ տնտեսական համագործակցության հարցերով հայ-ուկրաինական միջկառավարական հանձնաժողովի երրորդ համատեղ նիստը, որի ընթացքում ձեռք բերվեցին մի շարք պայմանավորվածություններ՝ գիտատեխնիկական, գյուղատնտեսության, բանկային, զբոսաշրջության և այլ ոլորտներում համագործակցության վերաբերյալ:

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են իրականացվել վերոնշյալ նիստի արդյունքում ստորագրված արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների և տնտեսական համագործակցության վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ուղղությամբ:

Երևանում կայանալիք չորրորդ համատեղ նիստը նախատեսվում է անցկացնել ս.թ. հունիսին:

### **Հայ-ավստրիական միջկառավարական հանձնաժողով**

2002 թ. փետրվարի 27-ին տեղի է ունեցել հայ-ավստրիական միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստը, որի ընթացքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ մի շարք ուղղությունների, մասնավորապես՝ իրավապայմանագրային, առևտրատնտեսական համագործակցության բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքների, ներդրումային փոխգործակցության հեռանկարների վերաբերյալ:

Ս/թ օգոստոսի 21-24-ը Երևանում անցկացվել է Հայ-ավստրիական առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության խառը հանձնաժողովի երկրորդ համատեղ նիստը:

Նիստի ընթացքում ավստրիական պատվիրակության անդամները հանդիպումներ են ունեցել ՀՀ ԱԺ-ում և նախարարություններում: Հանդիպումների ընթացքում քննարկվել են երկու երկրների տնտեսական համագործակցության ընդհանուր վիճակը, առկա խնդիրները, ինչպես նաև երկկողմ առևտրատնտեսական կապերի ընդլայնման, հետագա համագործակցության զարգացման նոր ուղղությունների հարցերը:

Հանձնաժողովի նիստի շրջանակներում կազմակերպվել են գործնական այցեր մի շարք ձեռնարկություններ և հանդիպումներ գործարարների հետ, որոնց ընթացքում քննարկվել են համագործակցության նոր հեռանկարները:

Նիստի արդյունքում ստորագրվել է հանձնաժողովի երկրորդ նիստի եզրափակիչ Արձանագրություն:

Խառը հանձնաժողովի երկրորդ նիստի շրջանակներում քննարկվեցին հետևյալ հիմնական թեմաները.

## 1. Տնտեսական իրավիճակը Ավստրիայում և Հայաստանում

Կողմերը տեղեկացրին միմյանց իրենց տնտեսությունների վիճակի և զարգացման միտումների վերաբերյալ: Ամրագրվեց, որ տնտեսական զարգացման շնորհիվ և՛ Ավստրիայում, և՛ Հայաստանում լրացուցիչ նպաստավոր խթաններ են նկատվում երկկողմ առևտրային և տնտեսական հարաբերությունների ընդլայնման և խորացման ուղղությամբ:

Կողմերի կարծիքով երկկողմ առևտրային ու տնտեսական հարաբերությունների զարգացումը հետագա տարիներին մեծապես պայմանավորված կլինի հետևյալ գործոնների ազդեցությամբ՝ համաշխարհային տնտեսության կոնյունկտուրային զարգացումը, նպաստավոր տնտեսական օրենսդրությունը, երկու երկրների տնտեսական իրավիճակը, Եվրոպական Միության հետագա զարգացումը, ԵՄ-ի և Հայաստանի հարաբերությունները, ինչպես նաև ԱՀԿ-ի հաջորդ՝ Հոնկոնգյան փուլի արդյունքները:

## 2. Երկկողմ առևտրաշրջանառություն և ներդրումներ

Կողմերը ներկայացրեցին երկկողմ առևտրի ընդհանուր պատկերը: Ավստրիական կողմը տեղեկացրեց, որ նախորդ 10 տարիների ընթացքում.

- արտահանումը Հայաստանից Ավստրիա ավելացել է ավելի քան 10 անգամ,
- արտահանումը Ավստրիայից Հայաստան ավելացել է մոտ 13 անգամ:

Այս առնչությամբ հայկական կողմը, մատնանշելով Ավստրիայի նկատմամբ արտաքին առևտրական հաշվեկշռի իր ավանդական դեֆիցիտը, մտադրություն հայտնեց այն կրճատել՝ արտահանվող ապրանքների տեսականու ընդլայնման և ծավալների մեծացման շնորհիվ:

Երկկողմ տնտեսական հարաբերությունների խորացման և հետագա զարգացման նպատակով կողմերը քննարկեցին հետևյալ միջոցառումները.

- արտաքին առևտրի և արտաքին տնտեսական քաղաքականության ոլորտներում փորձագետների պատրաստում և վերապատրաստում,
- վիճակագրական և տնտեսական ինֆորմացիայի, փաստաթղթերի և հրապարակումների փոխանակում,
- աջակցություն գործընկեր երկրում կազմակերպվող միջազգային և ազգային ցուցահանդեսներին և տոնավաճառներին երկրորդ կողմի մասնակցությանը,
- երկու երկրների գործարարների միջև կապերի խրախուսում,
- երկու երկրների տնտեսական պալատների միջև համագործակցության ակտիվացում:



Հատուկ ուշադրություն դարձվեց Հայաստանի Հանրապետությունում ներդրումային նախագծերի իրականացման գործընթացներին ավստրիական ձեռնարկությունների և ինստիտուտների մասնակցության խնդիրներին:

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության համար առաջնային խնդիր է օտարերկրյա ներդրումների խթանումը, մասնավորապես՝ ավստրիական կապիտալի ներգրավումը և այն, որ ավստրիական ձեռնարկությունները սկզբունքորեն շահագրգռված են հայ գործընկերների հետ համագործակցություն ծավալելու, հայկական կողմն ակնկալում է առավել ակտիվ համագործակցություն ավստրիացի գործընկերների հետ:

Որպեսզի ավստրիացի հնարավոր ներդրողները կարողանան ծանոթանալ հայկական ներդրումային օրենսդրությանը, ներդրումների խթանման պայմաններին և ներդրումային ծրագրերին, ավստրիական կողմից առաջարկվեց մինչև 2006 թ. առաջին եռամսյակը Վիեննայում կազմակերպել համապատասխան տեղեկատվական միջոցառում, որտեղ զեկույցներով հանդես կգան ներդրումների ոլորտի հայկական առաջատար փորձագետները: Նշված միջոցառումը կկազմակերպվի Ավստրիայի տնտեսական պալատի և Տնտեսության ու աշխատանքի դաշնային նախարարության կողմից:

### 3. Փոքր և միջին ձեռնարկություններ

1994 թ. ապրիլի 26-ի Համաձայնագրի 10-րդ Հոդվածի համաձայն քննարկվեցին հետևյալ հարցերը..

- Ավստրիայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության փոքր և միջին ձեռնարկությունների ոլորտի համար իրավասու պետական կառույցների միջև շփումների ակտիվացում և ընդլայնում,
- փոքր և միջին ձեռնարկատիրությանն առնչվող ավստրիական փորձի փոխանցում հայ այն փորձագետներին, որոնց թեկնածությունները կներկայացվեն ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից,
- ուսուցողական դասընթացների կազմակերպում հայկական փոքր և միջին ձեռնարկությունների, ինչպես նաև այդ ձեռնարկությունների աջակցությամբ զբաղվող կազմակերպությունների ղեկավար աշխատակիցների համար:

### 4. Չբոսաշրջություն

Կողմերը, վկայակոչելով 1994 թ. ապրիլի 26-ի Համաձայնագրի 5-րդ հոդվածի դրույթները, այն պատշաճ հիմք համարեցին երկու երկրների միջև զբոսաշրջության ոլորտում համագործակցության հետագա զարգացման համար:

Հայկական կողմից առաջարկվեցին համագործակցության հետևյալ հնարավորությունները.

- զբոսաշրջության ոլորտի հայ փորձագետների ուսուցում Ավստրիայում՝ հաշվի առնելով ամառային/ձմեռային, լեռնային/դաճուկային, լանդշաֆտային, մշակութային, առողջարարական, ինչպես նաև գյուղական զբոսաշրջության ոլորտներում Ավստրիայի միջազգային բարձր ստանդարտները,
- զբոսաշրջային գովազդի և տեղեկատվության փոխանակման բարելավում,
- համագործակցություն զբոսաշրջային բյուրոների և կազմակերպությունների միջև, համագործակցություն միջազգային զբոսաշրջային կազմակերպությունների

շրջանակներում,

- միջքաղաքային համագործակցություն (քույր-քաղաքներ):

Միջքաղաքային համագործակցության առնչությամբ ավստրիական կողմը հայտնեց, որ արդեն 10 տարի է, ինչ գոյություն ունի համագործակցությունը Հայաստանի և Ավստրիայի Ֆորարլբերգ երկրամասի միջև: Ավստրիական քաղաքների միության Նորամուծության փոխանցման կենտրոնի (KHTC- Know-how-Transfer-Center) միջոցով հնարավոր է կապեր հաստատել քաղաքապետերի հետ: Այս առումով KHTC-ն պատրաստ է զբոսաշրջության ոլորտի հայ փորձագետներից մեկին հրավիրելու ձմեռային սպորտի ավստրիական հայտնի կենտրոններից մեկը:

## 5. Բնապահպանություն

Կողմերն առանձնահատուկ նշանակություն են տալիս շրջակա միջավայրի և բնության պաշտպանությանը՝ ինչպես տարածաշրջանային, այնպես էլ գլոբալ կտրվածքով, որի պատճառով մտադրություն հայտնեցին սերտորեն համագործակցել այդ ոլորտում:

Հայկական կողմից առաջարկվեց համագործակցություն հետևյալ ուղղություններով.

- համատեղ հետազոտական աշխատանքների իրականացում երկրաբանության, գեոէկոլոգիայի, ընդերքի և բույսերի պահպանության ոլորտներում,
- տեղեկատվության և փորձի փոխանակում ջրային ռեսուրսների պլանավորման, օգտագործման և կառավարման ոլորտներում (ջրային աղբյուրներ, մշակում, կուտակում, տեղափոխում, բաշխում, կոմունալ և արդյունաբերական կեղտաջրերի մաքրում),
- շրջակա միջավայրի և բնապահպանության ոլորտի հայկական օրենսդրության բարելավում և դրա ներդաշնակեցում ԵՄ-ի ստանդարտներին,
- արոտավայրերի կայուն օգտագործում և հակամարտությունից տուժած տարածքների վերականգնում:

Հակամարտությունից տուժած արոտավայրերի և տարածքների առնչությամբ ավստրիական կողմը մատնանշեց Համաշխարհային բնապահպանական միության (IUCN, նստավայրը՝ Գլանդ, Շվեյցարիա) այն մեծ նորամուծությունը, որը, մասնավորապես, շատ օգտակար է եղել Բալկանների վնասված տարածքներում: Քանի որ Ավստրիան և Հայաստանը Կիոտոյի Արձանագրությունն արդեն իսկ վավերացրել են, համաձայնություն ձեռք բերվեց այդ Արձանագրության դրույթների համաձայն, համագործակցել «Մաքուր զարգացման մեխանիզմների» (CDM) շրջանակներում: Ընդձվեց հնարավորությունների ապահովման անհրաժեշտությունը՝ համատեղ CDM-ծրագրերի իրականացման համար: Դրանից բացի, նիստի շրջանակներում նախաձեռնվեց համագործակցություն բնապահպանության և բնապահպանական տեխնոլոգիաների ոլորտում:

## 6. Գյուղատնտեսություն և անտառտնտեսություն

Հայկական կողմն առաջարկեց համագործակցություն հետևյալ ոլորտներում.

- բուսաբուծության և անասնաբուծության ոլորտում տեխնոլոգիայի և նորամուծության փոխանցում,
- գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման (մասնավորապես

կաթնամթերքի և մսի արտադրության) ոլորտում տեխնոլոգիայի և նորամուծության փոխանցում,

- անտառային տնտեսության, շրջակա միջավայրի և բնապահպանության բնագավառներում տեխնոլոգիայի և նորամուծության փոխանցում,
- գյուղատնտեսական և անտառային տեխնոլոգիաներ,
- կրթական և հետազոտական համատեղ ծրագրեր,
- մասնակցություն սեմինարներին և մասնագիտական ցուցահանդեսներին:

Ավստրիական կողմը լրացուցիչ առաջարկեց առավել ակտիվ համագործակցություն խոշոր եղջերավոր անասնաբուծության ոլորտում (արհեստական բեղմնավորում):

## 7. Էներգետիկա

Կողմերը կակտիվացնեն իրենց համագործակցությունը Էներգետիկայի, մասնավորապես՝ «վերականգնվող էներգիայի» ոլորտում:

Այդ առնչությամբ հայկական կողմից ներկայացվեցին հետևյալ առաջարկությունները.

- փոքր ՋԷԿ-երի նախագծում, կառուցում և սարքավորումներով հագեցում,
- «Մաքուր զարգացման մեխանիզմների» ներդրման գործընթացի շրջանակներում համագործակցություն և համատեղ ծրագրերի իրականացում վերականգնվող էներգիայի բնագավառում (քամու, արևային, ջրի և կենսազանգվածի էներգիայի օգտագործում),
- այն ծրագրերի իդենտիֆիկացիա և իրականացում, որոնք ԵՄ-ի՝ վերականգնվող էներգիայի օգտագործման խրախուսման քաղաքականության շրջանակներում ֆինանսավորվում են ԵՄ-ի կողմից:

## 8. Մաքսային համագործակցություն

«Մաքսային գործերում համագործակցության և փոխօգնության մասին» երկկողմ համաձայնագիր կնքելու հայկական կողմի ցանկությանն ի պատասխան, ավստրիական կողմը հայտնեց, որ ԵՄ-ում Ավստրիայի առաջիկա նախագահության նախապատրաստական աշխատանքների և ռեսուրսների զբաղվածության պատճառով համապատասխան բանակցությունները կարող են սկսվել 2006 թ. առաջին կիսամյակում միայն:

## 9. Հետազոտություն, տեխնոլոգիա և ինովացիա

Հայկական կողմից ներկայացված առաջարկությունների վերաբերյալ (կիրառական հետազոտությունների և ինովացիոն տեխնոլոգիաների ոլորտում պետական կառավարման և խթանման ձևերի փոխանակում, ինովացիոն գործունեության համար համապատասխան ենթակառուցվածքների ձևավորում (տեխնոպարկեր, խրախուսման համակարգեր), ինովացիոն մենեջմենտի կադրերի պատրաստում)՝ Ավստրիայի Տնտեսության և աշխատանքի դաշնային նախարարությունը պատրաստակամություն հայտնեց իր գործընկերների (FFG - Հետազոտությունների աջակցության ընկերություն, VTO - Տեխնոլոգիական կենտրոնների միավորում, ACR - Austrian Cooperative Research) հետ համատեղ հայ փորձագետներին ներկայացնելու ավստրիական ինովացիոն համակարգի գործունեության ձևերը,

ինչպես նաև իրականացնելու տեղեկատվության և փորձի փոխանակում:

#### 10. Փոխադրումներ և հեռահաղորդակցություն

Հայկական կողմից առաջարկվել է կնքել «Ավտոտրանսպորտի ոլորտում համագործակցության մասին» երկկողմ համաձայնագիր, որի նախագիծը ներկայացվել է ավստրիական կողմին: Ավստրիական կողմը հատկապես դրական գնահատեց «Ավստրիական ավիաուղիներ» ընկերության ամենօրյա Երևան-Վիեննա օդային կապը, որը կարևոր նախապայման և լավ հիմք է երկկողմ արտաքին տնտեսական հարաբերությունների աշխուժացման և Հայաստանում ներդրումների ներգրավման համար: Այս համատեքստում ավստրիական կողմից անդրադարձ եղավ հայկական օդային հաղորդակցության ազատականացման թեմային:

#### 11. Սոցիալական և աշխատանքային խնդիրներ

Հայկական կողմը ցանկություն հայտնեց տեղեկատվության փոխանակման բնագավառում համագործակցել հետևյալ ոլորտներում.

- դժբախտ պատահարների և հիվանդության ապահովագրման հաստատությունների գործունեություն,
- աշխատանքի, վարձատրության և զբաղվածության ոլորտներ,
- աշխատանքի շուկա և օտարերկրյա աշխատուժ:

Այս կապակցությամբ ավստրիական կողմը հայտնեց, որ Ավստրիայի «Օտարերկրացիների զբաղվածության մասին» օրենքի համաձայն ԵՄ-ի անդամ երկրների քաղաքացիներ չհանդիսացող անձանց համար ներկայումս ընձեռնված է միայն «բարձր որակավորված առանցքային աշխատուժ» որակավորվող աշխատատեղ զբաղեցնելու հնարավորություն: Ինչպես ցույց է տալիս փորձը, Ավստրիայում նմանատիպ աշխատատեղերի սահմանափակ առաջարկներ կան, որոնք զբաղեցնելու համար պահանջվում է «առանցքային աշխատուժ» որակավորումը:

Բացի այդ, ավստրիական կողմը մատնանշեց ԵՄ-ի ընդլայնման կապակցությամբ կառավարական ծրագրի պահանջները, ինչպես նաև 2004 թ. մայիսի 1-ին ԵՄ-ին նոր անդամակցած պետությունների հանդեպ աշխատուժի տեղաշարժի և որոշակի ոլորտներում ծառայությունների համար սահմանված ԵՄ-ի անցումային կարգը: Անցումային կարգի իրագործման գործում ԵՄ նոր անդամ պետություններին առաջնայնություն է տրվում երկկողմ կարգավորումների ձևով:

«Աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության բնագավառում համագործակցության մասին» երկկողմ Համաձայնագիր կնքելու հայկական կողմի առաջարկության կապակցությամբ, ավստրիական կողմը հայտնեց, որ այն ներկայումս առաջնային չի դիտվում:

#### 12. Առողջապահություն

Ավստրիական կողմը վկայակոչեց երկու երկրների առողջապահության նախարարությունների միջև ավանդական լավ հարաբերությունները, ներառյալ Միջազգային հաստատություններում (ինչպես օրինակ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունում) փոխադարձ աջակցությունը, որը

ցանկալի է դարձնում առողջապահության բնագավառում համագործակցության շարունակումը:

- Հայկական կողմից ցանկություն հայտնվեց քննարկելու Ավստրիայի կողմից Հայաստանում հիվանդանոցների վերանորոգման և տեխնիկական վերազինման հարցը:

Այս կապակցությամբ ավստրիական կողմը փոխանցեց համաշխարհայնորեն ճանաչված և հայտնի ձեռնարկության տվյալները:

### 13. Հետագա համագործակցություն

Հայկական կողմից առաջարկվեցին խառը հանձնաժողովի իրավասության մեջ չմտնող այլ թեմաներ ևս.

ա/ Ֆիզիկական կուլտուրա և սպորտ

- «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում երկկողմ համագործակցության և հարաբերությունների աշխուժացման վերաբերյալ» համաձայնագրի նախագիծ,  
- փորձագետների և փորձի փոխանակում ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառում, մասնավորապես՝ մարզիչների, կազմաշխատողների և մարզական բժիշկների միջև,  
- սպորտային միջոցառումների և սեմինարների կազմակերպում և անցկացում,  
- Ծաղկածորի (Հայաստան) մարզահամալիրը համատեղ օգտագործելու հեռանկարների քննարկում,  
- երկու երկրների ազգային հավաքական թիմերի հանդիպումների, ինչպես նաև համատեղ ուսումնա-մարզական հավաքների և վերապատրաստման միջոցառումների կազմակերպում,  
- վիճակագրական նյութերի, հրապարակումների, փաստաթղթերի և կանոնագրերի փոխանակում ֆիզիկական դաստիարակության և սպորտային բժշկության բնագավառներում:

բ/ Արվեստ

Արվեստի և երիտասարդության բնագավառում համագործակցության մասին Համաձայնագրի նախագիծ:

գ/ Կրթություն և գիտություն

- «Բարձրագույն կրթության փաստաթղթերի, գիտական աստիճանների և կոչումների փոխադարձ ճանաչման մասին» Համաձայնագրի նախագիծ,  
- համալսարանների և գիտական կազմակերպությունների միջև կապերի աշխուժացում,  
- համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացում,  
- գիտնականների, համալսարանական դասախոսների և ուսանողների փոխանակում՝ կրթաթոշակների տրամադրման միջոցով:

Ավստրիական կողմը պատրաստակամություն հայտնեց սույն կետում նշված՝ հայկական կողմի համագործակցության առաջարկները փոխանցելու ավստրիական համապատասխան իրավասու նախարարություններին, գերատեսչություններին և

ինստիտուտներին: Հայաստանում Ավստրիայի դեսպանությունը և Ավստրիայում Հայաստանի դեսպանությունը կշարունակեն հետամուտ լինել այս ծրագրերի ընթացքին:

14. Ծանոթագրություն 1994 թ. ապրիլի 26-ի երկկողմ համաձայնագրի վերաբերյալ

Սույն Արձանագրության մեջ ամրագրված համագործակցությունը, ծրագրերը և միջոցառումները սկզբունքորեն իրականացվելու են կոմերցիոն հիմունքներով՝ համաձայն 1994 թ. ապրիլի 26-ի «Երկկողմ արտաքին տնտեսական կապերի մասին» Համաձայնագրի 8-րդ կետի: Տեխնիկական օգնության և ֆինանսական աջակցության տրամադրման վերաբերյալ որոշումները կկայացվեն յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար առանձին՝ ավստրիական ներքին կանոնակարգերին և միջոցներին համապատասխան:

Վերոնշյալ Համաձայնագրի 15-րդ Հոդվածի 2-րդ կետի համաձայն ավստրիական կողմը հայտնեց, թե այդ Համաձայնագրի որ հոդվածները կկիրառվեն հետագայում՝ նկատի ունենալով 1995 թ. հունվարի 1-ից Ավստրիայի անդամակցությունը ԵՄ-ին: Դա հայկական կողմից ընդունվեց ի գիտություն:

15. Արտաքին տնտեսական սեմինարներ

Ավստրիական կողմն իր պատրաստակամությունը հայտնեց հետագայում ևս Վիեննայում կազմակերպել տնտեսական կառավարման ոլորտի հայ պաշտոնյաների վերապատրաստման դասընթացներ: Ուսուցման թեմաները պետք է որոշվեն դասընթացի սկզբից առնվազն երեք ամիս առաջ՝ փոխադարձ համաձայնությամբ: Հայկական կողմը ստանձնելու է միայն Երևան-Վիեննա-Երևան ճանապարհածախսը: Դասընթացի ծախսերը (սեմինար, օթևան, կեցություն, փոխադրումներ, էքսկուրսիաներ), առկա միջոցներին համապատասխան, ստանձնելու է ավստրիական կողմը:

Երկկողմ արտաքին տնտեսական հարաբերությունների առավել արդյունավետ ծավալման, ինչպես նաև խառը հանձնաժողովի հաջորդ նիստի նախապատրաստման նպատակով համաձայնություն ձեռք բերվեց հանձնաժողովի համանախագահների աշխատանքային հանդիպում (միջանկյալ հանդիպում՝ նիստերի միջև ընկած ժամանակահատվածում) կազմակերպելու վերաբերյալ: Խառը հանձնաժողովի շրջանակներում ավստրիական կողմը փոխանցեց Հուլի 2006 թ. ավստրիական ձեռնարկությունների խնդրանքների և առաջարկների վերաբերյալ: Հայկական կողմը խոստացավ՝ մինչև համանախագահների միջանկյալ հանդիպումը պատասխան ներկայացնել ավստրիական կողմին:

Բանակցությունները տեղի ունեցան գործնական և բարեկամական մթնոլորտում: Ավստրիական կողմը շնորհակալություն հայտնեց հայկական հյուրընկալության համար:

Կողմերը պայմանավորվեցին խառը հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել 2006 թ-ին, Ավստրիայում: Նիստի կոնկրետ ժամկետը և օրակարգը կհամաձայնեցվեն դիվանագիտական ուղիներով:

Նիստին հաջորդած ժամանակահատվածում արձանագրության կատարողական առումով հարկ է հիշատակել իրավա-պայմանագրային դաշտի զարգացման ոլորտում հետևյալ առաջընթացը.

- 2005 թ. դեկտեմբերի 12-15-ը ՀՀ կրթության և գիտության նախարար Ս. Երիցյանի՝ Ավստրիա կատարած պաշտոնական այցի ընթացքում ստորագրվել է «Երկու

երկրների բուհ-երի որակավորման դիպլոմների և գիտական աստիճանների փոխադարձ ճանաչման մասին հուշագիրը»: Եվրոպական տարածաշրջանում բուհական որակավորումների ճանաչման մասին 1997թ. համաձայնագրի հիման վրա ստորագրված այս հուշագիրն առաջին փաստաթուղթն է այդ բնագավառում, որը ստորագրվել է ԵՄ անդամ երկրի և Յայաստանի միջև: Կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել խորացնել համագործակցությունը «Բոլոնիայի գործընթացի», ինչպես նաև Erasmus Mundus ծրագրի շրջանակներում: - Յամաձայնեցման ավարտական փուլում է «ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության և Ավստրիայի Հանրապետության տրանսպորտի, նորարարության և տեխնոլոգիայի դաշնային նախարարության միջև ապրանքների միջազգային փոխադրումների մասին համաձայնագրի» նախագիծը:

Արձանագրությամբ նախատեսված ներքոշարադրյալ պայմանավորվածությունների կենսագործման նպատակով ՀՀ ԱԳՆ-ն սպասում է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության առաջարկություններին՝

- Վիեննայում ներդրումային-տեղեկատվական միջոցառման կազմակերպում.

Ըստ արձանագրության 2-րդ կետի, ավստրիացի հնարավոր ներդրողներին հայկական ներդրումային օրենսդրությանը և ներդրումային ծրագրերին ծանոթացնելու նպատակով, նախատեսվում էր մինչև 2006թ. առաջին եռամսյակը Վիեննայում կազմակերպել համապատասխան տեղեկատվական միջոցառում: Ավստրիական կողմից միջոցառումը կկազմակերպվի Ավստրիայի տնտեսական պալատի և Տնտեսության և աշխատանքի դաշնային նախարարության կողմից:

- Վիեննայում տնտեսական կառավարման ոլորտի պաշտոնյաների համար վերապատրաստման սեմինարի կազմակերպում.

Ըստ 15-րդ կետի, ավստրիական կողմը պատրաստակամություն է հայտնում կազմակերպել տնտեսական կառավարման ոլորտի հայ պաշտոնյաների վերապատրաստման դասընթացներ Վիեննայում:

- Համանախագահների միջանկյալ հանդիպման կազմակերպում.

Արձանագրության 15-րդ կետով նախատեսվում է նիստերի միջև ընկած ժամանակահատվածում հանձնաժողովի համանախագահների միջանկյալ աշխատանքային հանդիպում՝ նախկին պայմանավորվածությունների իրականացման, ինչպես նաև հանձնաժողովի հաջորդ նիստի նախապատրաստական աշխատանքները քննարկելու նպատակով:

### **Յայաստանի Հանրապետության եւ Տաշիկստանի Հանրապետության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողով**

2005թ. հունիսի 29-30-ը ք.Դուշանբեում կայացել է Յայաստանի Հանրապետության և Տաշիկստանի Հանրապետության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի երկրորդ համատեղ նիստը:

Դրան նախորդել է 2005թ. հունիսի 21-ին կայացած Յայաստանի Հանրապետության և Տաշիկստանի Հանրապետության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հայկական մասի նիստը, որը կայացել է ՀՀ

բնապահպանության նախարարությունում և որի նպատակն էր վերջնականորեն քննարկել բոլոր նախապատրաստական հարցերի իրականացման ընթացքը: Միջկառավարական հանձնաժողովի հայկական մասի պատասխանատու քարտուղարը նախապես մեկնել էր Դուշանբե՝ տաջիկական մասի հետ քննարկելու երկկողմանի առաջարկությունները և նախապատրաստելու համդիպումը: 2005թ. հունիսի 29-ին իր աշխատանքները սկսեց Հայաստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 2-րդ համատեղ նիստը: Նիստի օրակարգի /որը նախապես համաձայնեցվել էր դիվանագիտական ուղիներով/ քննարկման ընթացքում կողմերը կատարեցին մի շարք փոփոխություններ:

Քննարկումների արդյունքում հաստատվեց 7 կետից և 3 ենթակետից բաղկացած օրակարգը: Նրանում մասնավորապես ընդգրկված էին գյուղատնտեսության, կրթության, մշակույթի, հաղորդակցությունների, արդարադատության ու առողջապահության բնագավառներում համագործակցության մասին հարցեր: Նշված հարցերի վերաբերյալ, հանձնաժողովի նիստի ավարտին՝ 2005թ. հունիսի 30-ին, ստորագրվել է Հայաստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի երկրորդ համատեղ նիստի արձանագրությունը:

Նիստի ընթացքում ստորագրվեցին հետևյալ երկկողմանի փաստաթղթերը.

- ՀՀ կառավարության և ՏՀ կառավարության միջև «Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագիրը,
- ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ՏՀ գյուղատնտեսության նախարարության միջև «Ագրոարդյունաբերության համալիրի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը,
- ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության և ՏՀ մշակույթի նախարարության միջև «Մշակույթի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը,
- ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՏՀ կրթության նախարարության միջև «Կրթության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը,
- «Հայ-տաջիկական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի գործունեության մասին» կարգը:

2005թ. հունիսի 30-ին հանձնաժողովի նիստի աշխատանքների ավարտից հետո, հանձնաժողովի հայկական և տաջիկական մասերի նախագահներն անցկացրել են մամուլի ասուլիս:

Նույն օրը ՏՀ կառավարությունում կայացել է Հայաստանի Հանրապետության և Տաջիկստանի Հանրապետության պատվիրակությունների ղեկավարության հանդիպումը Տաջիկստանի Հանրապետության վարչապետի հետ:

ՀՀ և ՏՀ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի երկրորդ համատեղ նիստի ընթացքում որոշվեց, որ միջկառավարական հանձնաժողովի երրորդ համատեղ նիստը կկայանա 2006թ. երրորդ եռամսյակում, ք.Երևանում:

Միաժամանակ, կողմերը պայմանավորվեցին արտաքին գործերի նախարարության միջոցով պարբերաբար փոխանակել տեղեկատվություն նիստի դրույթների կատարման ուղղությամբ իրականացվող աշխատանքների վերաբերյալ:



## **Յայ-դրղզական միջկառավարական հանձնաժողով**

Յաշվետու ժամանակահատվածում հանձնաժողովի ոչ մի նիստ չի գումարվել և ոչ մի քայլ չի ձեռնարկվել՝ դրղզական կողմից ակտիվություն չցուցաբերելու պատճառով:

## **Յայաստան-Եվրամիություն համագործակցության կոմիտե**

ՅՅ-ԵՄ միջև կնքված Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագրի (ԳՅՅ) շրջանակներում նախապատրաստվել և անցկացվել են ՅՅ-ԵՄ համագործակցության կոմիտեի և Տնտեսական հարցերով համագործակցության Ենթակոմիտեի հերթական նիստերը Երևանում:

Ս.թ. ապրիլի 20-ին տեղի է ունեցել ՅՅ-ԵՄ տնտեսական հարցերով համագործակցության Ենթակոմիտեի 5-րդ նիստը, իսկ հունիսի 20-ին՝ Յայաստան-Եվրամիություն համագործակցության կոմիտեի 6-րդ նիստը:

2006 թ. նախատեսվում է անցկացնել ՅՅ-ԵՄ համագործակցության կոմիտեի հերթական նիստը Բրյուսելում և Տնտեսական հարցերով համագործակցության Ենթակոմիտեի հերթական նիստը Երևանում:

## **Յայ- լիբանանյան միջկառավարական հանձնաժողով**

Յաշվետու ժամանակահատվածում Յայ-լիբանանյան միջկառավարական համատեղ հանձնաժողովի նիստեր տեղի չեն ունեցել:

## **Յայ- ճապոնական տնտեսական համագործակցության կոմիտե**

Յաշվետու ժամանակահատվածում կոմիտեն չի գործել՝ ճապոնական կողմից կոմիտեի կազմը չներկայացնելու պատճառով:

## **Յայ-մոլդովական միջկառավարական հանձնաժողով**

Յաշվետու ժամանակահատվածում Յայ-մոլդովական միջկառավարական համատեղ հանձնաժողովի նիստեր տեղի չեն ունեցել:

## **Յայ-թուրքմենական միջկառավարական հանձնաժողով**

Յայ-թուրքմենական միջկառավարական հանձնաժողովի թուրքմենական մասի կազմը դեռևս չի հաստատվել, և երկու երկրների միջև տնտեսական համագործակցության համակարգումն ընթանում է այլ ձևաչափով:

Դեռևս 2003 թ. հունիսին ՅՅ Էներգետիկայի նախարարությունը ՅՅ այլ նախարարություններից և գերատեսչություններից ստացել է հայ-թուրքմենական տնտեսական համագործակցության գծով իրենց բնագավառին առնչվող գործընթացի վերաբերյալ տեղեկանքներ և առաջարկություններ, որոնք ներկայացվել են ՅՅ ԱԳՆ:

## **Հայ-ռումինական միջկառավարական հանձնաժողով**

Հանձնաժողովի առաջին և միակ նիստը կայացել է 2000թ. ապրիլին, Բուխարեստում: Հաշվի առնելով, որ 2004թ. տարեվերջին Ռումինիայում անց են կացվել նախագահական և պառլամենտական ընտրություններ, ինչպես նաև ձևավորվել է նոր կառավարություն՝ միջկառավարական հանձնաժողովի շրջանակներում միջոցառումներ չեն իրականացվել:

## **Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև առևտրատնտեսական ու գիտատեխնիկական միջկառավարական հանձնաժողով**

ՀՀ տրանսպորտի և կապի նախարար, հայ-բուլղարական միջկառավարական հանձնաժողովի հայկական մասի նախագահ Ա. Մանուկյանը Բուլղարիայի Հանրապետության տրանսպորտի և հաղորդակցության նախարար, միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Ն. Վասիլևի հրավերով 2005թ. մարտի 9-13-ը գործուղվել է Սոֆիա:

Այցի ընթացքում կողմերը քննարկել են Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև երկկողմ և տարանցիկ ավտոմոբիլային փոխադրումների դյուրացման, ՏՐԱՍԵԿԱ ծրագրի և Տրանսպորտի նախարարների եվրոպական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում ղեկավար մարմինների ընտրության ժամանակ փոխադարձ աջակցություն ցուցաբերելու, ինչպես նաև երկկողմ համագործակցության զարգացմանն ուղղված այլ հարցեր: Հանդիպման ընթացքում ստորագրվել է հեռահաղորդակցության, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում համագործակցության 2005-2006թթ. ծրագիրը:

## **ՀՀ-ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողով**

2005թ. ապրիլի 21-22-ը Բաքվում (Ադրբեջանական Հանրապետություն) կայացել է ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողովի չորրորդ տարեկան նստաշրջանը: Միջկառավարական հանձնաժողովում նախագահությունը Բաքվում ռոտացիոն կարգով Հայաստանի Հանրապետությունից փոխանցվեց Ադրբեջանական Հանրապետությանը:

Նստաշրջանին մասնակցելու համար հայկական կողմին հրավեր էր ուղարկել ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողովի մշտական քարտուղարությունը: Ադրբեջանական կողմը, որպես ընդունող երկիր, նման նախաձեռնություն չէր ցուցաբերել, հետևապես, չէր երաշխավորվել նաև հայկական պատվիրակության անվտանգությունը: Արդյունքում ընդունվել էր քաղաքական որոշում՝ միջկառավարական հանձնաժողովի չորրորդ տարեկան նստաշրջանի աշխատանքներին չմասնակցելու վերաբերյալ:

Վերոնշյալի պատճառով ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողովի մշտական քարտուղարությանն էր ներկայացվել հայկական կողմի պաշտոնական դիրքորոշումը նստաշրջանի օրակարգի բոլոր հարցերի վերաբերյալ՝ դրանք հանդիպմանը վերջինիս կողմից հնչեցնելու նպատակով:

Բաքվի ստաշրջանում քննարկվելիք երկու կարևոր հարցերի՝ ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողովի մշտական քարտուղարության համատեղ ֆինանսավորման մասին համաձայնագրի նախագծի և ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողովի մշտական քարտուղարության Գլխավոր քարտուղարի ընտրությունների հարցում Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը հետևյալն է եղել.

ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողովի մշտական քարտուղարության համատեղ ֆինանսավորման մասին համաձայնագիր.

ՀՀ կառավարության 2005թ. ապրիլի 1-ի որոշմամբ հավանություն է տրվել համաձայնագրի կնքման առաջարկությանը, որի նախագիծը «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի համաձայն պետք է համաձայնեցվի ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների հետ: Հայկական կողմի համար առանցքային խնդիր էր անդամավճարների մասնաբաժինների ճշգրիտ համակարգի ընդունումը: Նպատակահարմար է համարվել ֆինանսավորման համակարգի հիմքում միջազգային կազմակերպությունների կողմից պետությունների մակրոտնտեսական ցուցանիշների կամ գործակիցների ընդունումը, թեպետ նախորդ աշխատանքային հանդիպումներում այդ առաջարկությանը կողմերից որևէ մեկը աջակցություն չէր ցուցաբերել:

Միջկառավարական հանձնաժողովի չորրորդ տարեկան նստաշրջանում ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողովի մշտական քարտուղարության համատեղ ֆինանսավորման մասին համաձայնագիրը ստորագրվել է մասնակից-պետությունների կողմից:

ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողովի մշտական քարտուղարության Գլխավոր քարտուղարի ընտրություններ.

Ադրբեջանը, որպես ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողովում նախագահությունը ստանձնող երկիր, գլխավոր քարտուղարի պաշտոնում առաջադրել է Ադրբեջանը ներկայացնող թեկնածուի: Հայկական կողմը հանդես է եկել Ադրբեջանը ներկայացնող թեկնածուի դեմ (2003թ. հոկտեմբերի 9-10-ը երևանում կայացած ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողովի երրորդ նստաշրջանում ադրբեջանական կողմը հայտարարել էր, որ եթե հայկական կողմը, որպես նախագահող երկիր, գլխավոր քարտուղարի պաշտոնում առաջադրի Հայաստանը ներկայացնող թեկնածուին, ապա ադրբեջանական կողմը հանդես կգա այդ թեկնածության դեմ):

Զվեարկության արդյունքում ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողովի մշտական քարտուղարության գլխավոր քարտուղար ընտրվեց Բուլղարիան ներկայացնող Լ. Տրենկովան, որի լիազորությունները երկարացվեցին ևս մեկ տարի ժամկետով՝ մինչև միջկառավարական հանձնաժողովի հաջորդ տարեկան նստաշրջանը: